

ԱԻԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՄԱՍ 9

9(47.925)

փ-31

ԱՌԵՏԻՄ ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՏԸ ԵՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ



ՄԱՍ 9-րդ

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ - 2001

AVETIS PAPAZYAN

THE ARMENIAN QUESTION AND THE GENOCIDE

LOS ANGELES, 2001 PART - 9

3234

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ցեղասպանութեան պատմութիւնը պէտք է թողնել պատմաբաններին»

Թուրքիայի նախկին դեսպան՝
Կիւմտիզ Ա.Բթան եւ... ուրիշներ

1915-23 թթ. հայերի Ցեղասպանութեանը վերաբերող նիւթերի շարքում խիստ կարեւոր են տուեալ ժամանակուայ Ամերիկայի Միացեալ Նահանգների քաղաքական եւ դիւանագիտական գործիչների, պատմաբանների, հրապարակախօսաների, զանազան բնագաւառի գործիչների յայտնած հաւաստի տեղեկութիւնները, որոնք շարադրուած են ականատեսի վկայութիւնների հիման վրայ: Դրանց թուում են 1913-1916 թթ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան՝ Հենրի Մորկլընթաուն, յայտնի քաղաքական գործիչներ եւ պատմաբաններ Էդուարդ Ս. Լիդելը, Ըկասթա Բերնոն, Հենրի Հարիսոն Ռիզսը, Ադա Չեմպերը եւ շատ ուրիշներ: Փաստագրական նիւթերով հրատարակուած խիստ կարեւոր են նաեւ պատմաբան եւ հրապարակախօս Հըրպըրդ Էտրմզ Կիպլընզի (1880-1934) վկայութիւնները: Նա 1908-1913 թթ. եղել է Թուրքիայում, որպէս New York Herald ամերիկեան թերթի թղթակից, ինչպէս նաեւ դասաւանդել է Տարսոնի ամերիկեան գոլէճում: Թուրքիայում գտնուելու տարիներին Դոկտ. Կիպլընզը բազմիցս ականատես է եղել սուլթանական եւ երիտթուրքական իշխանութիւնների կազմակերպած հայերի ջարդերին: Նրա գրչին են պատկանում բազմաթիւ հրապարակախօսական յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ:

1916 թ. սկզբին (The Blackest page of Modern History, New York-London) «Ժամանակակից պատմութեան սեւագոյն էջը» խորագրով անգլերէն լրջ տեսած նրա գիրքը հայոց Մեծ Եղեռնի մասին, անմիջապէս թարգմանուեց եւ հրատարակուեց ռուսերէն (Սան Պետերբուրգ) եւ հայերէն (Նիւ Եորք) լեզուներով: Նրա կարեւոր աշխատութիւններից կարելի է յիշատակել նոյնպէս անգլերէն հրատարակուած «Օսմանեան կայսրութեան կազմաւորումը» ստուարածաւալ աշխատութիւնը, որը թարգմանուել եւ հրատարակուել է նաեւ օսմաներէն, արաբատառ թուրքերէնով (տե՛ս H.A. Gibbons, Osmanli Imparatorlugunun Kuruluşu, Istanbul, 1928):

«Ժամանակակից պատմութեան սեւագոյն էջը» գրքում Դոկտ. Կիպլընը հիմնականում խօսում է 1915 թ. տեղի ունեցած հայերի տեղահանութեան եւ կոտորածների մասին: Այնուհանդերձ, որպէս ազնայատես նա կանգ է արել նաեւ Ատանայի 1909 թուականին տեղի ունեցած հայերի կոտորածների ողբերգական դէպքերի շուրջ:

Այս գիրքը բաղկացած է ներածութիւնից, 4 գլուխներից եւ եզրակացութիւնից:

Գլուխ Ա.

Այստեղ խօսւում է 1915 թ. երիտթուրքերի գործադրած հայերի բռնի տեղահանութեան եւ կոտորածների մասին, այն բնութագրելով որպէս հետեւողական եւ խնամքով նախապատրաստուած մի ծրագիր բնաջնջելու համար հայ ազգը Օսմանեան կայսրութիւնում: Կիպլընը վկայում է. «Վեց ամսուայ ընթացքում սպանուել է մէկ միլիոն հայ: Զօրքերի քանակը եւ նրանց ջարդելու միջոցներն անօրինակ են նորագոյն պատմութեան մէջ»:

Գլուխ Բ.

Հայերը երբեք չեն սպառնացել թուրքիայի անվտանգութեանը: Ապստամբութեան վարկածը ուղղակի պատրուակ էր հայերին տեղահանելու եւ կոտորելու համար:

Գլուխ Գ.

Դարերի ընթացքում հայերը խիստ կարեւոր դեր են խաղացել Օսմանեան կայսրութեան բարօրութեան եւ բարգաւաճման խնդրում: Ապացուցուած է, որ քրիստոնեան եւ մահմետականը կարող են սպրել խաղաղ եւ համերաշխ թուրքիայում:

Գլուխ Դ.

Գերմանական կառավարութիւնը կարող էր արգիլել երիտթուրքերի հայաջինջ քաղաքականութիւնը, բայց այն որոշել էր ոչ մի միջոց չձեռնարկել: Լուրջ փաստեր կան հաւատարմութեան, որ գերմանական կառավարութիւնը, եթէ չէ քաջալերած, սպահովաբար ծափողջունած է հայերի անհետացումը Փոքր Ասիայից, որպէսզի Գերմանիայի քաղաքական եւ տնտեսական ծրագիրը դիւրութեամբ գործադրուի Օսմանեան կայսրութիւնում:

Հըրպըրդ Կիպլընը յետագայում, 1921 թ. հրատարակած իր հրատարակատեսակի յօդուածներում մէջդարեց եւ դատապարտեց նաեւ Ֆրանսայի թուրքամէտ քաղաքականութիւնը Կիլիկիան թուրքերին յանձնելու կապակցութեամբ: Այդ նենգ քաղաքականութիւնը նիւթական եւ մարդկային նոր գոհերի պատճառ դարձաւ: Կենդանի մնացած կիլիկահայերը պարտադրաբար հեռացան իրենց հարազատ բնակավայրերից եւ քշուեցին աշխարհի չորս կողմերը:

Այս գրքի հայերէն հրատարակութեան առթիւ առաջաբան է գրել Դոկտ. Յ. Թիւրքեքեանը (Օգոստոս 1, 1916), ուր ըստ արժանւոյն բարձր է գնահատել Կիպլընի գիրքը, ինչպէս նաեւ հայերէն թարգմանութիւնը կատարած երկու հայ երիտասարդ ուսանողներին Ա. Սաղաթէլեանին եւ Ե. Մօրլեանին:

Հարկ է նշել, որ հայերէն մի այլ թարգմանութիւն լոյս է տեսել նաեւ 1917 թ. Թիֆլիսում, Ա. Թովչեանի թարգմանութեամբ:

Ստորեւ Կիպլընի վերոյիշեալ գրքից որոշ կրճատումներով ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում 1915 թ. Հայոց Յեղասպանութեան վերաբերող Ա. գլխի նիւթերը:

... 1915 Ապրիլին, Պոլսէն հրամաններ ղրկուեցան Փոքր Ասիոյ տեղական իշխանութիւններուն, ի գործ դնել կարելի եւ յարմար ամէն միջոց, կանխաւ անդամալուծելու հայերու կողմէ փորձուելիք սպստամբական որեւէ ձեռնարկ:

Տեղական իշխանութեանց շեշտուած էր թէ՛ հայեր կայսրութեան սպահովութեան ծայրայեղ վտանգ կը սպառնային, եւ ազգային պաշտպանութիւնը զը պահանջէր ՀՐԱՄԱՅԱՆՎԱՆՕՐԷՆ կանխազգուշական խստութիւն, հայերը անվնաս դարձնելու:

Կարգ մը վայրերու տեղական իշխանութիւններ պատասխանեցին թէ՛ իրենք նշմարած չէին որեւէ կասկածելի գործունէութիւն հայերու կողմէ, եւ յիշեցուցին կառավարութեան թէ՛, հայերը ոչ մէկ

վնաս կրնային հասցնել, քանի որ գէնք չէին կրեր, եւ արդէն ամէնէն կորովի արական տարրը բանակին մէջ կը գտնուէր: Կան թուրքեր որոնք ամօթի եւ գթութեան տեսակ մը զգացում ունին: Բայց թուրք պաշտօնեաներու մեծադոյն մասը պատրաստակամ եւ եռանդաւոր Պոլսէն եկած թելադրութիւնը կատարեց: Անաստողներ փոխուեցան:

Եւ հայկական ջարդերու նոր թուական մը սկսաւ...:

Նախ, այս ձեռնարկը կարելի ամենաքիչ դժուարութիւնով գործադրելու համար, դեռ եւս քաղաքներու եւ գիւղերու մէջ մնացած հայ բնակչութեան ուժեղ տղամարդիկը ազդարարութիւն ստացան հաւաքուիլ յարմարագոյն վայր մը, ընդհանրապէս քաղաքէն դուրս: Ժանտարմներ եւ ոստիկաններ այս հրամանին գործադրութեան խստիւ հակեցին: Ոչ ոք աչքէ վրիպեցաւ: Չանոնք ժողուելէ վերջ, բոլորն ալ սուրէ անցուցին: Գործադրութեան այս մեթոտը հնարաւոր էր փոքր տեղերու մէջ, առհասարակ: Մեծ քաղաքներու մէջ սակայն, Պոլսոյ հրամանները, այսքան ճիշդ ու պարզ կերպով կատարելի կարելի չէր միշտ: Հայ երեւելիներ, փողոցներու վրայ կամ իրենց տուներուն մէջ, սպանուեցան: Ներքին քաղաքներու այրեր հսկողութեամբ «ուրիշ քաղաք» ղրկուեցան: Քանի մը ժամէն վերադարձան պահապանները՝ առանց իրենց բանտարկեալներուն...: Մովեզերեայ քաղաքներու հայեր նաւակներով «ուրիշ նաւահանդիստ» մը տարուեցան: Նաւակները զարմանալիօրէն շուտ վերադարձան պարպուած իրենց ճամբորդներէն:

Յետոյ, որպէսզի երկաթուղիի եւ ճամբաներու շինութեան համար գործածուող հայ զինուորներ կարող չըլլան որեւէ հաւանական դժուարութիւն յարուցանել կաշխատցուէին իրարմէ մղոններով հեռու կէտերու վրայ, 300-էն 500 հոգի պարունակող խմբակներու բաժնուած: Թուրք կանոնաւոր բանակի զօրագունդեր ղրկուեցան շուտով «հայ յեղափոխութիւնը նուաճելու»: Յանկարծակի յարձակում կրեցին բանուորական այդ փոքրիկ խմբակները, որոնք չարաչար կաշխատէին թիերով, լծակներով եւ փետատներով: Այս «սպատամբներ» լծակներով եւ փետատներով գիտնալէ առաջ թէ

ինչ կը պատահէր...: Մէկ քանին, որ յաջողեցան փախչիլ՝ հետապնդուեցան հեծեալներէ կամ թրատուեցան...:

Մայիսէն մինչեւ Օգոստոս՝ Օսմանեան կառավարութիւնը մեթոտիկ կերպով հետապնդեց ծրագիր մը՝ աւելի դժոխային քան հնարաւոր յոռեգոյն ջարդը: Փոքր Ասիոյ իւրաքանչիւր նահանգ հեռագրուեցաւ բովանդակ հայութիւնը Միջագետք տեղահան ընել: Հրամանը որոշ էր եւ մանրամասն: Մոռացութեան մատնուելու չափ աննշան գիւղակ մը չկար: Մուսետիկներ ազդարարեցին թէ ամէն հայ, այսինչ որոշ ատենին, պէտք է պատրաստ ըլլայ մեկնելու անծանօթ վայր մը: Մերեր, հիւանդներ եւ յղի կիներ բացառութիւն չէին կազմեր: Միայն հարուստ վաճառականներ, դրամատէրներ եւ գեղադէմ կիներ ու աղջիկներ արտօնուած էին ազատ մնալ մահմետական կրօնքը ընդունելու պայմանաւ: Սակայն - յաւիտենական յարգանք իրենց - հատ հատ անձեր միայն օգտուեցան փախուստի այս միջոցէն: Երկու օրէն մինչեւ վեց ժամ տրուած էր պատրաստութեան համար: Տնական առարկաներ, անասուն կամ աւելորդ զգեստ արգիլուած էր տանիլ: Անկողինի կազմած եւ կերակուրի պաշար ուժը ներածին չափ կարելի էր վերցնել, ուսին վրայ դրած: Եւ պիտի քաշէին հետիոտն կիզիչ արեւին տակ, անջրդի ձորերէն եւ ձիւնապատ լեռներու կիրճերէն: Ու հարկ էր սովորաբար ճամբորդութեան մը՝ երեքէն մինչեւ ութ շաբաթ...:

Տեղահանութեան հրամանը տակաւին չստացւած քրիստոնեայ գիւղերէ անցնելու պարագային, կարաւանը արտօնուած չէր ընդունիլ կերակուր եւ կամ որեւէ հոգածութիւն: Մերեր, հիւանդներ եւ փոքր մանուկներ ինկա՛ն ճամբաներուն եզրերը, անգամ մըն ալ չէլլելու պայմանաւ...: Երկուցի մէջ եղող կիներ սուխներով եւ խարազաններով առաջ կը քշուէին, մինչեւ որ մահը ազատէր զիրենք: Միբուն աղջիկներ կը խլուէին հարէմներուն համար, կամ, պահապաններու կողմէ կը բռնաբարուէին ամէն օր՝ սպասելով մահուան, իբր դժբաւտ ազատարի: Անոնք որ կրնային, անձնապան եղան: Մայրեր, խելագար՝ գետը նետեցին իրենց զաւակները, անոնց տառապանքին վերջ տալու: Անօթութիւն, ծարաւ, լքում եւ ամօթ հա-

րիւր հազարներով կիներ մահուան գիրկը տարին։
Նախ օրէ օր, յետոյ ժամ առ ժամ նօսրացաւ
խղճալի կարաւանը։ Ամէն ոք յուսահատ՝ միայն
մահուան փափաքեցաւ, քանզի հնա՛ր է որ յոյսը
ապրի ճամբորդութեան մը մէջ որ վախճան չունի։
Նոյնիսկ ամէնէն զօրաւորին քով ուժ մնալ
կարելի՛ է։ Դժոխք առաջնորդող այդ ճամբէն աջ
կամ ձախ խոտորողներ հրացանազարկ կամ սուրի-
նահար եղան։ Անոնք որ փախչելով, յաջողեցան
ազատուիլ պահապաններու ձեռքէն, քիւրտերէն եւ
հեծեալ գիւղացիներէ՝ հետապինդ գետին
փռուեցան...։

Ու երիտասարդ թուրքեր դեռ կը շարունակեն
որոճալ հայ յեղափոխութիւնը հո՛ն, Փոքր Ասիոյ
մէջ։

Վերի պարբերութիւնը հազիւ աւարտած էի, երբ
տունս եկաւ անգլիացի կին մը, զոր տարիներէ ի
վեր կը ճանչնամ։ Ան մէկ ամիս առաջ թողած է
Ատանան։ Իր պատմութիւնը յարեւմտան է ուրիշ-
ներու պատմածին։ Ես ունիմ նոյնօրինակ փաստեր
ամերիկեան, անգլիական, գերմանական եւ զուիցե-
րիական ակնատեսներէ, որոնց վկայութիւնները
գիրար կը հաստատեն։

Անգլուհին ինծի այսպէս պատմեց.-
«Տեղահանութիւնը տակաւին կը շարունակուի։
Ներքին նահանգներէն սկսած մինչեւ Պաղտատի
երկաթուղիի երկայնքին՝ անցնելով Ատանայի
մէջէն՝ անոնք կը ղրկուին դէպի մահուան ուղե-
ւորութիւն։ Երկաթուղին, ամէնուր որ գոյութիւն
ունի, բնաջնջումի գործը փութացնելու կը ծառայէ՝
աւելի արագ քան այն վայրերը, ուր կարաւանները
կը յառաջանան ոտքով։ Ա՛հ, երանի՛ թէ միայն
ջարդէին լմնցնէին, ինչպէս համիտեան օրերուն
Ատանայի երկաթուղիի կայարանէն դիտելի հայ
կիներ, որոնք, մակիկները թեւերնուն վրայ
բարձրացուցած, «ջուր» կը խնդրէին։ Հացի ախոր-
ժակ չէր մնացած այլեւս անոնց մէջ։ «Միայն
ջուր, պուտ մը ջուր» կ'աղերսէին...։ Ջրհան մը
կար։ Ծունկի եկած՝ խնդրեցի պահապանէն թոյ-
լատրել ինծի կաթիլ մը ջուր տալ։ Կառախումբը
շարժեցաւ իսկոյն։ Եւ վերջին լսածս կորուսեալ-
ներու աղիողորմ հառաչն էր...։ Ասիկա մէկ անգամ
չէ պատահած։ Գրեթէ ամէն օր նոյն երեւոյթը կը
կրկնուէր։ Լորս Պրայս 800,000 գոհե՛ր կենթադրէ։

Լա՛ւ, այժմ այդ թիւը մէկ միլիոնի հասած ըլլալու
է։ Կրնա՞ք երեւակայել մարդկային արարածներ, որ
նոյնիսկ վայրենի անասունները այսպիսի մահով
մը մահացնեն...»։

Բայց Ուաշինկթընի թուրք դեսպանը տակաւին
կը յայտարարէ թէ, այս պատմութիւնները
«չինծու» են եւ թէ «կիներ եւ պղտիկներ չեն
սպաննուած...»։ (Տես էջ 16-37)։

ԵՐԵՎԱՆ • ԵԱԲԱԹ, ՆՈՅՄԵՐԻ 25, 2000

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՍԵՒՋԳՈՅՆ ԷՉԸ

1915Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԴԷՊՐԵՆԸ

ԻՌՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ՊԱՏԱՍԿԱՆԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեղինակ՝
ՀՐԳՂՐԴ ԻՏԸՄՁ ԿԻՊՁԵՁ

Ցառողքամ՝
ՅՐ. Ե. ԹԻՐԵԱԳԵԱՆԷ

Բարգմանցիլ՝
Ա. ՍԱՀԱԲԷԼԻԱՆ Է. Ե. ՄՕՐԵԱՆ



Հ Ա Յ Կ Տ Գ Ա Ր Ա Ն
ԵՒ ԾՈՐԹ
1916

**ՄԱՐԴԻԿ, ՈՐ ՊԵՏՔ ՉԷ
ՄՈՌԱՅՈՒԵՆ
ՓՕԼ ՏԷՇԱՆԷԼ**

2001 թ. Յունուարի 30-ին Ֆրանսիայի նախագահ՝ Ժաք Շիրաքը եւ վարչապետ Լիոնել Ժոսփէնը վաւերացրին խորհրդարանի եւ Մերակոյտի կողմից որդեգրուած՝ «Ֆրանսիան հրապարակայնօրէն ճանաչում է 1915-ի հայերի Յեղասպանութիւնը» օրէնքի ուժ ստացած բանաձեւը:

Երկար սպասուած այս մարդասիրական արդարացի որոշման կապակցութեամբ, այսօր մէկ անգամ եւս խորը երախտագիտութեամբ պիտի յիշենք Ֆրանսիայի առաջողէմ պատմաբաններին, քաղաքական եւ հասարակական գործիչներին անունները, որոնք 1915 թ. Մեծ Եղեռնի ողբերգութեան առաջին օրուանից ցատումով մեղադրեցին եւ դատաւարտեցին հայ ժողովրդի նկատմամբ գործադրուող այդ մեծ աղէտը եւ ամէն ջանք գործադրեցին կանխելու այն:

Ահա նրանցից մի քանիսի անունները. Վիքթոր Հիւկօ, Անատոլ Ֆրանս, Անթուան Մէյէ, Ժաք Տը Մորգան, Հանրի Պարպի, Ռընէ Փինոն, Լուի Արագոն, Էմիլ Դումերկ եւ ուրիշներ:

Ես համոզուած եմ, որ իւրաքանչիւր հայ ծանօթ է եւ գիտի այս մեծերի անունները:

Այնուհանդերձ կան եւ եղել են այնպիսիները, որոնց անունները մնացել են ստուերում, կամ մենք քիչ ենք խօսել եւ նուազ քարոզչական աշխատանք տարել նրանց հայանպաստ գործունէութեան շուրջ: Այդ տեսանկիւնից, իմ այս յօդուածը նուիրուում է 20-րդ դարակիրդրի Ֆրանսիացի գիտնական եւ պետական գործիչ՝ Փօլ Տէշանէլին:

Նա եղել է Ֆրանսիայի Ակադեմիայի անդամ եւ վարել է նաեւ Ֆրանսիայի Ազգային Ժողովի նախագահի բարձր պաշտօնը:

Մեծ Եղեռնի օրերին Փօլ Տէշանէլը Ֆրանսիացի միւս գործիչների նման պատապարտել է հայ ժողովրդի նկատմամբ գործադրուող երիւթուրքերի ոճրագործ արարքները:

Այս առումով ցայտուն օրինակ է Հանրի Պարպիի «Սարսափի Երկրին Մէջ» գրքի համար Փօլ Տէշանէլի գրած նախաբանը:

Հանրի Պարպիի անունը ես յիշատակեցի վերելում: Նա Ֆրանսիացի լրագրող էր: 1916-1917 թթ. որպէս Փարիզի «Le Journal» թերթի թղթակից եղել է Մերձաւոր Արեւելքի պատերազմական գործողութիւնների շրջանում, ինչպէս նաեւ Արեւմտեան Հայաստանում եւ ականատես եղել հայութեան անմարդկային տեղահանութիւններին եւ կոտորածներին:

Նրա գիրքը լոյս է տեսել 1917 թ. Ֆրանսերէն լեզուով Փարիզում, հետեւեալ խորագրով:

Au Pays de L'Épouvente L'Armenie martyr (Սարսափի երկրին մէջ, նահատակ Հայաստան):

Ականատեսի աչքով գրուած այս փաստագրական գիրքը կարճ ժամանակ անց 1919 թ. թարգմանուել եւ հրատարակուել է հայերէն եւ ռուսերէն լեզուներով:

Հանրի Պարպիի այս գրքում կան չափանագանց գոյացուցուց եւ սարսափելի տեսարանների նկարագրութիւններ: Ուստի, ցանկալի էր, որ հայերի փոխարէն այն առաւելաբար կարգային օտարները, յատկապէս թուրքերը համոզուելու համար թէ ինչպիսի ահաւոր ցեղասպանութեան է ենթարկուել հայ ժողովուրդը Օսմանեան կայսրութիւնում:

Հանրի Պարպիի այս գրքի նախաբանը 1917 թ. գրել է Փօլ Տէշանէլը: Ստորեւ այն բերում ենք ամբողջութեամբ, քանի որ այնտեղ տրուած է գրքի համապարփակ վերլուծութիւնն ու անկողմնակալ գնահատականը:

Պրն. Հանրի Պարպի այս հատորը անուանած է «Սարապիի Երկրին Մէջ»:

Հայաստանի նոր մէկ նահատակութեան պատմութիւնն է անիկա, աւելի դժբախտաբար քան բոլոր այն միւսները զորս անցուցած է: 1915-ի սկիզբը, Թուրքիոյ մէջ երկու միլիոնի հայութիւն մը կար. ատկից հազիւ թէ 900,000-ը վերապրած է այսօր: Եւ այս միլիոն մը մարդոց սպաննուած է գլուխ հանուած է անգթութեան ամէնէն ամօթապարտովը: Այս մարդիկը մեռած են, ինչպէս կ'ըսէ Պրն. Պարպի, հանգրուան առ հանգրուան. զանոնք ամէնքը մէկ, չեն դրկած խմբական մահացումին. զնդակի բռնուածները ամէնէն նուազ դժբախտները եղած են, որովհետեւ իրենց տառապանքը եղած է կարճատեւ: Բազմաթիւ հարիւր հազարաւորներ տարագրուած են ու գացած են կազմելու մահուան այդ չարաշուք կարաւանները, որոնց յաւիտենական նախատինքը պիտի կրէ Թուրքիա, Գերմանիոյ զինակիցը. կենդանիի ողբալի երամներ, որոնք գացած են կողոպտուած, սպաննուած, քշուելով իրենց դահիճներուն կողմէ դէպի աքսոր, անօթութիւն կամ կախաղան:

Պրն. Հանրի Պարպի կը նկարագրէ ողբալի գոյութիւնը այս տարագրեալներուն, որոնք անտուղութենէ կը մեռնին, ի զուր օգնութիւն հայցելով եւ նշաւակ կ'ըլլան բարոյական ու ֆիզիքական յուսկոյն տառապանքներուն: Տեսած է ան, թափառող մանուկներու խումբեր, տժգոյն ու փոխ, ոսկոր մնացած, ի խնդիր իրենց սպաննուած ծնողքներուն եւ քանդուած դիւղերուն: Կը նկարէ ան շարչարանքի կայանները, որոնք Եփրատ գետի երկայնութեան հաստատուած են եւ ուր առանց սպաստանի, գրեթէ առանց սնունդի, ձմեռուան մահացու ցուրտին կամ ամառուան նոյնքան հասեղ ջերմութեան ցուցադրուած, այրերն ու կիները կը մեռնին յամրօրէն, գոհունակ աչքին տակ թուրքին որ անոնց վրայ կը հսկէ: Այս գրքին բոլոր գլուխները ի յայտ կը բերեն եղբրական վաւերագրութիւններ: Ամբաստանութեան պաշտօնաթուղթ մըն է

ասիկա, ականատես վկայի մը կողմէ կազմուած: Կոստանդնուպոլսոյ մէջ կամ ի Պերլին, կրնան չքմեղանքներ փնտռել, չափազանց շատ անգամներ ի դործ դրուած մէթոտին համաձայն, կրնան յայտարարել թէ սպաննեցին ինքզինք-

նին պաշտպանելու համար: Բայց ստութեամբ պիտի չկրնան իրաւունք շահիլ քանի որ հայերը չեն եղած գրգռիչները. անոնք զոհեր եղած են: Անոնց սպանութիւնը գլուխ հանուած է, առաջուրնէ խնամոտ կերպով պատրաստուած ծրագրի մը համաձայն, վատանուն գործը կանոնաւորութեամբ մինչեւ վերջը տարուած է եւ չէ ինայուած ոչ մէկ քաղաքի, ոչ մէկ գիւղի, ոչ մէկ ընտանիքի. արիւնը հոսած է ամէնուրեք: Պրն. Պարպիի վկայութիւնը մէկը պիտի ըլլայ անոնցմէ որոնք ամենածանր կերպով պիտի ճնշեն անպարտ այս մեծ ժողովուրդին սպանիչներուն վրայ:

Բնաջնջումը Հայաստանի, ահա՛ թէ ինչ էր վատագի ծրագիրը կարմիր Սուլթանին, եւ ահա՛ ինչ որ կ'ուզեն տակաւին երիտասարդ թուրքերը, որոնք, սգատագրելու համար իրենց երկիրը, լաւագոյն բան մը չգտան, բայց եթէ

զայն Գերմանիոյ ճորտը դարձնել: Կոստանդնուպոլսոյ մէջ, քաղաքական վարչութիւնը, իրաւ է, անուն փոխեց, բայց մէթոտները նոյնը մնացին, ինչպէս եւ մարդիկը, հակառակ այն նոր պիտակին որով խեղկատակօրէն ինքզինքնին մակագրեցին: Թուրք պաշտօնատարը սքանչելիօրէն արժանաւոր մրցորդն է գերման պաշտօնատարին:

Մին ինչպէս միւսը, ունի այն վայրագութիւնը, անճանաչողութիւնը այն բանին որ արդար է եւ այն բանին որ ազնիւ է: Ինչ որ թուրքը, բշտեղով գերմանացիէն, Հայաստանի մէջ ըրաւ, գերմանացին ըրաւ զայն ամէն տեղ:

Հայաստանի նահատակութիւնը, յայտնագրուած քաղաքակիրթ աշխարհին, պէտք է փոխարինուի: Կարելի բան չէ որ անպատիժ մնան այն ոճիրները, որոնք երկար ցանկը կու տայ Պրն. Հանրի Պարպի: Աշխարհ պիտի չկրնայ եղածը մոռնայ: Թուրքը, իր կատարողութեանը մէջ, միայն Հայ ժողովուրդեան վրայ չյարձակեցաւ: Վանայ մէջ գտնուող մեր Փրանսական տոմինիկեան կրօնաւորներն ալ անգթօրէն կրեցին Հարուածը: Մարտինի Հայ-կաթոլիկ եպիսկոպոսը իր հօտին մէկ մասովը խողխողուեցաւ եւ լուր չունինք այն Փրանսացի քահանաներու մասին, որոնք այս վերջին քաղաքին մէջ հաստատուած էին: Գերապայծառ Իսրայէլեան, Խարբերդի Հայ կաթոլիկ եպիսկոպոսը, Ուրֆայի եւ Տիար-պէքիւրի մէջտեղ, աքսորի ճամբուն վրայ խողխողուեցաւ, քահանաներու, կրօնաւորուհիներու եւ իրեն ընկե-

րացող խումբին մէկ մասին հետ: Մայաթիայէն գերապայծառ Խաչատուրեանը խեղդամահ ըրած են: Խեղդամահ ըրած են Սղերդի բոլոր քաղաքացի ու սուրիացի քահանաները: Սպաննած են Ճէզիրէի քաղաքացի եւ սուրիացի եպիսկոպոսները եւ Մէտէյի, Սեւակի, Տէրիքի, Վիրանշէհիւրի քահանաները: Մեր կրօնական միաբանութիւններու բոլոր հաստատութիւնները փլցուած կամ աւարի տրուած են. մասնաւորաբար Վանայ մէջ, Փրանսական տոմինիկեաններու բնակարանը, 1915 Ապրիլ եւ Մայիս ամիսներուն, պաշտօնաւորներուն իբր ամբողջ ծառայած է: Թուրքիա եւ Գերմանիա պէտք է որ դարմանեն այս բոլոր ոճիրները:

Հայաստանը ազատելով Օսմանեան լուծէն, համաձայնականները դարմանած պիտի ըլլան մեծ անօրէնութիւն մը: Իրաւունքը չի կրնար աւելի երկար ատեն չճանցուած մնալ: Արիւնագանգ այն նահատակութիւններէն ետք, զորս կրած է Հայ ազգը, որուն կապուած ենք այնքան յիշատակներով, միւս ճնշուած ազգերուն պէս ինքն ալ պիտի ողջունէ ազատութեան շողարձակ ժամը:

ՓՈԼ ՏԵՇԱՆԷԼ

ՆՈՐ ՕՐ • ԵԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 21, 2001

Մի Հատուած Եոհաննէս Լեփսիուսի Դատական Վկայութիւնից

Հայոց Յեղասպանութեանը վերաբերող փաստագրական վաւերագրերի եւ ուսումնասիրութիւնների շարքում խիստ կարեւոր նշանակութիւն ունեն տուեալ ժամանակուայ գերմանացի գործիչների հաղորդած տեղեկութիւնները, ուր հաւաստի փաստերով աշխարհին են ներկայացուած 1915 թ. ծանրագոյն ողբերգութեան պատասխանատուները: Նրանց թուում իր առանձնաշատուկ տեղն ունի գերմանացի արեւելագէտ, հոգևոր եւ հասարակական անխոջ գործիչ Եոհաննէս Լեփսիուսը (1858-1926): Դեռեւս Ապտիլ Համիտեան բռնատիրութեան շրջանում Սասունում եւ այլուր տեղի ունեցած հայերի կոտորածների մասին նա բազմաթիւ փաստեր է հաւաքել եւ 1896 թ. հրատարակել «Հայաստանն ու Եւրոպան» վաւերագրական գիրքը (1): Իսկ Մեծ Եղեռնի ողբերգական դէպքերի մասին Ե. Լեփսիուսը 1919 թ. հրատարակեց փաստաթղթերի մեծաթիւք մի ժողովածու՝ «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1918 թթ.» խորագրով (2): Այս ժողովածուում ընդգրկուած նիւթերը, այդ թուում Գերմանիայի եւ Թուրքիայի դեսպանների, հիւպատոսների ու այլ պաշտօնական անձանց գաղտնի զեկուցագրերը, ականատեսների վկայութիւնները անհերքելիօրէն հաստատում են, որ Երիտթուրքերի կազմակերպած Հայերի բռնի տեղահանութիւնն ու կոտորած-

ները նպատակ ունէին ոչնչացնել Հայ ժողովրդին եւ այդ յանցագործութեան մէջ իր առիժի բաժինն ունէր նաեւ Գերմանիան: Ե. Լեփսիուսի ծաւալած հայանրպաստ գործունէութեան ասպարէզում կարեւոր տեղ է գրաւում նաեւ Սողոմոն Թէհլիրեանի դատավարութեան ընթացքում ներդրած ջանքերն ու յատկապէս ճշմարտութեան րացայայտմանը նուիրուած նրա անկողմնակալ ելոյթը:

Յայտնի է, որ 1921 թ. Յունիսի 2-3-րդ Պերլինի նահանգային Երրորդ դատարանում տեղի ունեցաւ Հայ ժողովրդի Յեղասպանութեան զլխաւոր յանցագործներից մէկի՝ Թալէաթ փաշայի սպանութեան համար ամբաստանուած, ուսանող Սողոմոն Թէհլիրեանի դատավարութիւնը:

Դատավարութեան վերջում, մեղադրեալ Սողոմոն Թէհլիրեանը լիովին արդարացուեց եւ ազատ արձակուեց դատարանի հետեւեալ որոշման հիման վրայ.-

«Յանցաւոր է ամբաստանեալ Սողոմոն Թէհլիրեանը 1921ի Մարտ 15ին Շարլոտտենբուրգի մէջ զիտաւորեալ կերպով մարդ մը, Թալէաթ փաշան սպաննած ըլլալուն համար: Ո՛՞ջ (3)»:

Երկու օր տեւած այս դատավարութեան նիստերին, որպէս վկայ մասնակցում էր նաեւ Եոհաննէս Լեփսիուսը: Նրա ընդարձակ ելոյթը խիստ բովանդակալից էր, անկողմնակալ եւ ճշմարտացի, հիմ-

նուած փաստադրական նիւթերի հիման վրայ:

Ստորև բերում ենք մի Հատուած այդ վկայութիւնից, ուր լիովին ապացուցուած է Երիտթուրքերի գործադրած Զարգարական քաղաքականութիւնը Հայ ժողովրդի նկատմամբ: Միմիայն մի ճշդում պիտի կատարենք Ե. Լեփսիուսի նշած Հայերի թուաքանակի մասին:

Բնականաբար Ե. Լեփսիուսը ճիշդ է նկատել, որ «բացարձակ ստոյգ ազգահամար չկայ Թուրքիոյ նման երկրի մը մէջ»: Բանը նրանումն է, որ Ապտիւլ Համիտի ընտանիքներին շրջանում և յետոյ, երբ Հայկական Հարցը դարձաւ միջազգային շահարկման առարկայ, թուրք պետական գործիչները, այդ թուում և պատմաբանները, բարենորոգումների անհրաժեշտութիւնը ակերող Համարելու միտումով, դիտարեալ սկսեցին ամէն ջանք թափել նուազեցնելու Հայերի թուաքանակը Օսմանեան կայսրութիւնում: Ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Հաշուառման ընթացքում բազմաթիւ հայկական գիւղերի բնակչութիւնը դուրս է մնացել գրանցումից: Հայ և օտարազգի պատմաբանների ու մասնագէտների տուեալները այս խնդրում բերել են այն եղրակացութեան, որ նախապատերազմական շրջանում Հայ ազգաբնակչութեան թուաքանակը Օսմանեան կայսրութիւնում եղել է 2.5 միլիոն մարդ: Իսկ դժուար Հայերի թուաքանակի մասին խօսելիս մատնանշում է, որ Մեծ Եղեռնի ընթացքում նահատակուել են աւելի քան 1.5 միլիոն անմեղ Հայեր (4):

* * *

«Ընդհանուր տեղահանութիւնը որոշեց Երիտասարդ Թուրքերու կոմիտէն. Թալէաթ փաշան, իրրև ներքին գործոց նախարար (միւս կողմանէ նաև էնվէր փաշա իրրև պատերազմական նախարար) Հրամայեց և օգնութեամբ Երիտասարդ Թուրքերու կոմիտէի կազմակերպութեան ի գլուխ հանուեցաւ: Տեղահանութիւնը, ընդհանուր աքսորը, որ արդէն 1915 Ապրիլին որոշուած էր, կը յարէր Թուրքիոյ ամբողջ Հայ ժողովրդեան, քիչ բացառութեամբ զոր զեռ պիտի յիշեմ: Թուրքիոյ բնակչութեան մէջ կար՝ պատերազմէն առաջ՝ 1,850,000 Հայ: Բացարձակ ստոյգ ազգահամար չկայ բնականաբար Թուրքիոյ նման երկրի մը մէջ (4): Յիշելով թիւը կը ստանանք եղած վիճակագրական ատաղձէն, որ կը համաձայնի Հայ Պատրիարքարանի ազգահամարին: Հայ բնակչութիւնը սփռուած պատերազմէն առաջ եւրոպական Թուրքիոյ (Կ. Պոլիս, Աղբիւնապոլ, Ռոտտսթո) և ասիական Թուրքիոյ վրայ (Անատոլու, Կիլիկիա, Հիւսիս. Ասորիք, Միջագետք):

«Հայոց մեծագոյն մասը կ'ապրէր արեւելեան Անատոլու, Հայկական Լեռնաշխարհին վրայ, ազգին հին Հայրենեաց, վեց վիլայեթներու մէջ. Կարին, Վան, Բաղէշ, Տիարպեքիք, Սերաստիա և Սարրերդ: Արեւմտեան Անատոլու, Կ. Պոլսոյ զինաց, Մարմարայի Հարաւային եզերքը կը կազմեն բնակչութեան մէկ զօրաւոր բնակչութիւնը: Հարաւային Անատոլուի մէջ Կիլիկիա՝ (Տարուսի տափաստանով և Աղեքսանդրիոյ ծովախոր-

շին շուրջ գտնուող սահմանակից Հիւսիսային ասորական երկիրներով) մէկ մասն էր Հայկական հին Հայրենիքին:

«Անատոլուի ամբողջ Հայ բնակչութիւնը բարձրագոյն հրամանով տեղահանուեցաւ ղէպի Հիւսիսային և արեւելեան եզրը Միջագետքի անապատին, Տէր էլ Ջօր, Ռակկա, Մեսկէնէ, Ռաս իւլ Այն, մինչև Մոսուլ:

«Մերձաւորապէս 1,400,000 Հայ տեղահան եղած են:

«Ինչ կը նշանակէ այս աքսորը: «Թալէաթի կողմէ ստորագրուած հրամանագրի մը մէջ սախօսքը կը գտնուի. «Աքսորավայրն է Ոչնչութիւն»: Համաձայն այս հրամանագրին, Հոն տարուեցաւ. արեւելեան Անատոլուի նահանգներէն ղէպի Հարաւ տեղահան եղող ամբողջ բնակչութեանէն միայն 10% աքսորավայր հասան. մնացած 90% ճամբան արդէն սպաննուեցան, բացի ոստիկաններէն վաճառուած և քիւրտերէն առեւանգուած կիներէն ու աղջիկներէն, մնացածն անօթութենէ և ուժասպառութենէ մեռան: Այն Հայերէն, որոնք արեւմտեան Անատոլուէ, Կիլիկիայէ և Հիւսիսային Ասորիքէ անապատի եզրը քուեցան, Հաւաքատեղիներու մէջ Հետգետէ Հարիւր Հաղարաւոր մարդկանց նկատելի բաղմութիւն մը Հաւաքուեցաւ: Ասոնք յետով մեծ մասամբ սիստեմաթիք սովով ու պարբերական ջարդերով ոչնչացան: Երբ Հաւաքատեղիները նոր խումբերով կը լեցուէին, այնպէս որ մարդկանց ալ տեղ չէր մնար, գունդ առ գունդ անապատ կը տարուէին և Հոն կը մորթուէին: Թուրքեր յայտնած են, թէ անգլիացուց օրինակով՝ Հանդէպ

Բուրբուրու Հարաւ Ափրիկէի մէջ, իրենք Հաւաքատեղիներու գաղափարին եկած են: Պաշտօնապէս կը յայտարարուէր, թէ աքսորները նախազգուշական կարգադրութիւններ կը ծառայեն, անհատապէս սակայն Հեղինակաւոր անձեր թողողին յայտնի կերպով կը ծանուցանէին, որ Հայ ազգը ոչնչացուել էր նպատակը:

«Ըսածս կը հետեւի նաև այն վաւերաթուղթերէն, որոնք կայսերական Դեսպանութեան և արտաքին գործոց նախարարութեան արձանագրութիւններէն Հրատարակեցի, մանաւանդ գերման հիւպատոսներու և Կ. Պոլսոյ գերման դեսպաններու զեկոյցները» (5):

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.- Dr. Johannes Lepsius, "Armenien und Europa", Berlin, 1896.
- 2.- "Deutschland und Armenien, 1914-1918", Potsdam, 1919.
- 3.- Դատաւարութիւն Թալէաթ փաշայի, սղագրական գեկուցում, Վիեննա, Միլիթարեան տպարան, 1921, էջ 210:
- 4.- Մանրամասն տե՛ս Ռուբէն Սահակեան, «Ցեղասպանութեան Պատմութիւնից», Երևան, 1990, էջ 288-289: Հայկազուն Գալստեան, «Արեւմտեան Հայաստանի Բնակչութեան Ազգային Կազմը Ըստ Վիտալ Բիցիէի Վիճակագրութեան», «Մերձաւոր և Միջին Արեւելիի Երկրներ և Ժողովուրդներ»... XII, Թուրքիա, Երևան, 1985, էջ 59:
- 5.- Դատաւարութիւն Թալէաթ փաշայի... էջ 89-91:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳՐՈՒՄ

2000 թ. Օգոստոսի 10-ին լրանում է Սեւրի միջազգային դաշնագրի ստորագրման 80-ամեակը:

Սեւրի (Փարիզի մօտ) դաշնագիրը պաշտօնապէս կնքուել է մի կողմից Օսմանեան կայսրութեան, իսկ միւս կողմից Առաջին Համաշխարհային Պատերազմում յաղթանակած դաշնակից պետութիւնների միջեւ: այդ թւում՝ բրիտանական կայսրութիւնը, Ֆրանսիան, Իտալիան, Ճափոնիան, Հայաստանը, Բելգիան, Յունաստանը, Հենգզը, Լեհաստանը, Փորթուկալիան, Ռումինիան, Սերբա-Պորվաթիա-Սլավոնական պետութիւնը եւ Չեխոսլովակիան:

Հայաստանի Հանրապետութեան անունից դաշնագիրը ստորագրեց Աւետիս Ահարոնեանը:

Դաշնագիրը բաղկացած էր 13 մասերից, 433 յօդուածներով:

Ըստ այդ յօդուածների պաշտպանուելու էին Օսմանեան կայսրութեան կեղեքուած ժողովուրդների ազգային իրաւունքները, իսկ արաբները, հայերը, քրտերը պիտի ստեղծէին ինքնուրոյն անկախ պետականութիւններ:

Թուրքիան 89-րդ յօդուածով ճանաչում եւ ընդունում էր Հայաստանի անկախութիւնը: Դաշնագրում բերուած 88-93 յօդուածները լիովին հաստատում էին հայ ժողովրդի արդարացի իրաւունքների իր բնօրրանի՝ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի նախագահ Վուտրօ Ուիլսոնը (1913-1921 թթ.) իր ժամանակին ամէն ջանք գործադրեց, որպէսզի դրական եւ արդար լուծում տրուի հայկական հարցին: 1920 թ. Նոյեմբերի 22-ին նա մեծ տէրութիւններին ներկայացրեց Արեւմտեան Հայաստանի սահմանադիժը (90,000 քառ. քմ.), որով Արեւելեան Հայաստանի հետ Միացեալ Հայաստանն ունենալու էր մօտ 162 հազար քառ. քմ. տարածք: Միեւնոյն ժամանակ Սեւրի դաշնագրի 351 եւ 352 յօդուածներով Հայաստանին իրաւունք էր տրուելու Պաթումի եւ Տրապիզոնի նաւահանգիստների վրայով ազատ մուտք գործել դէպի Սեւ Ծով:

Դժբախտաբար ԱՄՆ-ի Գոնկրէսում Պատմական Հայաստանի մանտաթը ստանձնելու նախաձեռնութիւնը յաջողութիւն չունեցաւ, որը եւ բացասաբար ազդեց 1920 թ. Սեւրի դաշնագրի վաւերացմանը:

Գոյութիւն ունեցող քաղաքական տարաձայնութիւնների եւ մի շարք եւրոպական պետութիւնների անբարեացակամ դիրքորոշման հետեւանքով, այն չվաւերացուեց եւ մնաց թղթի վրայ:

Իրենց հերթին քեմալականները նոյնպէս ամէն ջանք գործադրեցին, որպէսզի խափանեն Սեւրի դաշնագրի վաւերացումը: Այդ նրանք էին, որ սանձազերծեցին նուաճողական պատերազմ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ, այն կործանելու միտումով:

Հայկական հարցի դրական լուծման խնդիրը խափանուեց նաեւ յետագայում: 1923 թ. Յուլիսի 24-ին կնքուած Լոզանի դաշնագրով բոլորովին անտեսուեցին հայ ժողովրդի արդարացի իրաւունքները: Թուրքիան ոչ միայն իւրացրեց Արեւմտեան Հայաստանն ու Պատմական Հայաստանի հողերը, այլեւ մերժեց աշխարհով մէկ պիտուած տարագիր հայութեան վերադարձը դէպի հարազատ երկիր:

Դժբախտաբար, մտնում ենք 21-րդ դար, բայց դեռեւս միջազգային չափանիշով չի դատապարտուել եւ ճանաչուել դարասկզբի հայոց առաջին Յեղասպանութիւնը:

Օսմանեան կայսրութեան օրինական ժառանգորդը հանդիսացող Թուրքիայի ներկայ պետութիւնը, պէտք է ոչ միայն ճանաչի հայ ժողովրդի Յեղասպանութիւնը, այլեւ հատուցի մէկուկէս միլիոն նահատակների արեան գինը, ինչպէս նաեւ հայ բնակչութեան շարժական եւ անշարժ գոյքի կորուստի արժէքը եւ ետ վերադարձնի խլուած հողերը իր օրինական տիրոջ:

Ստորեւ որոշակի պատկերացում կազմելու համար ձոն Կիրակոսեանի եւ Ռուբէն Սահակեանի կազմած փաստաթղթերի գրքից մէջլբերում ենք Սեւրի դաշնագրի Հայաստանին վերաբերող բաժինը: Տէն «Հայաստանը միջազգային դիւանադիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828-1923)» ձոն Կիրակոսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1972, էջ 676-677:

ՀԱՅԱՍՏԱՆ

(Քաղաքական Դրոյթներ, մասն 3-րդ, բաժին 6-րդ)

ՅՕԴՈՒԱՄ 88. Թուրքիան յայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպէս այդ բանն արդէն արել են դաշնակից տէրութիւնները, որպէս ազատ եւ անկախ պետութիւն:

3234

ՅՕԴՈՒԱԾ 89. Թուրքիան եւ Հայաստանը, ինչպէս եւ բարձր պայմանաւորուող կողմերը, համաձայնուած են էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի վիլայէթներում Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանատու մը թողնել Ամերիկայի Միացեալ Նահանգների որոշմանը եւ ընդունել ինչպէս նրա որոշումը, նոյնպէս եւ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դէպի ծով ելք տալու եւ յիշեալ սահմանագծին յարող Օսմանեան բոլոր տարածքների սպառազմականացման վերաբերեալ:

ՅՕԴՈՒԱԾ 90. Այն դէպքում, եթէ 89-րդ յօդուածի համաձայն սահմանագիծը որոշելիս յիշեալ վիլայէթների ամբողջ տարածքը կամ նրա մի մասը յանձնուի Հայաստանին, Թուրքիան այսօր արդէն յայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարուած է յանձնուած տարածքի նկատմամբ բոլոր իրաւունքներից եւ իրաւահիմունքներից: Սոյն պայմանագրի որոշումները, որոնք կիրառուելու են Թուրքիայից անջատուող տարածքների նկատմամբ, այս պահից սկսած կը գործադրուեն նաեւ այդ տարածքի նկատմամբ:

Հայաստանի ինքնիշխանութեանը յանձնուող տարածքի կապակցութեամբ նրա վրայ դրուող Թուրքիայի Ֆինանսական պարտաւորութիւնների թափինը եւ դրանց ընդթիւ ու այն իրաւունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կը սահմանուեն սոյն պայմանագրի 8-րդ մասի (Ֆինանսական դրոյթներ) 241-244-րդ յօդուածների համաձայն:

Յաջորդ պայմանագիրը կը կարգաւորեն, եթէ դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգաւորուել սոյն դաշնագրով եւ որոնք կարող են ծնունդ առնել յիշեալ տարածքի փոխանցման կապակցութեամբ:

ՅՕԴՈՒԱԾ 91. Եթէ 89-րդ յօդուածում նշուած տարածքի մի մասը յանձնուի Հայաստանին, սպա սահմանագծման յանձնաժողով, որի կազմը կ'որոշուի յետագայում, կը ստեղծուի երեք ամսուայ ընթացքում այն բանից յետոյ, երբ արդէն ընդունուած կը լինի Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերեալ յիշեալ յօդուածում նախատեսուող որոշումը:

ՅՕԴՈՒԱԾ 92. Ատրպէյճանի եւ Վրաստանի հետ

Հայաստանի սահմաններն ըստ պատկանելոյն կ'որոշուեն շահագրգռուած պետութիւնների ընդհանուր համաձայնութեամբ:

Երբ 89-րդ յօդուածում նախատեսուած որոշումն արդէն ընդունուած կը լինի եւ եթէ դրանից յետոյ այս կամ այն շահագրգռուած պետութիւնները չեն կարողանայ ընդհանուր համաձայնութեամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կ'որոշեն Գլխաւոր դաշնակից տէրութիւնները, որոնք դրա հետ միասին պէտք է հոգ տանեն սահմանադատումը տեղում գծանշելու մասին:

ՅՕԴՈՒԱԾ 93. Հայաստանն ընդունում է (համաձայնելով դրանք մտցնել Գլխաւոր տէրութիւնների հետ պայմանագրի մէջ) այն որոշումները, որոնք այդ տէրութիւններն անհրաժեշտ կը համարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ցեղի, լեզուի եւ կրօնի առումով տարբերուած են ազգաբնակչութեան մեծամասնութիւնից:

Հայաստանը նմանապէս համաձայնում է Գլխաւոր տէրութիւնների հետ պայմանագրի մէջ մտցնել այն որոշումները, որոնք այդ տէրութիւններն անհրաժեշտ կը համարեն տարանջուամի ազատութիւնը եւ այլ ազգերի առեւտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար:

Կիլիկիայի Հայկական Պետությունը

(11 - 14-րդ դարերում)

Ժամանակագրություն

1997 թվականից սկսած ԱՄՆ Համալսարանի Հայ Ժողովրդի Պատմության ամբիոնի վարիչ Պրոֆ. Ռիչըրդ Հովհաննիսյանը տարեկան երկու անգամ կազմակերպում է միջազգային գիտաժողովներ «Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» խորագրի տակ:

Բարձր գնահատելով այդ գիտաժողովներին ներկայացված գեկուցումների բազմաբնույթ և բովանդակալից թեմաները, միևնույն ժամանակ ուզում ենք շեշտել դրանց խիստ կարևոր իմաստն ու նշանակությունը հայապահպանության սրբազան գործին:

Այո, մենք չենք մոռացել և տեր պիտի կանգնենք մեր հայրենի բնօրրան քաղաքներին, գյուղերին, հողին ու ջրին և բոլոր ճարտարապետական հուշարձաններին: Այնպես որ, Պրոֆ. Ռիչըրդ Հովհաննիսյանը իր այս միջացառումներով և ընդհանրապես հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմության վերաբերող գիտա-դասախոսական գործունեությամբ մեծ աշխուժություն է մտցնում Հայ Դատի արդար լուծման խնդրում:

Գոհունակությամբ պիտի նշենք, որ ավանդական դարձած, գիտաժողովները շարունակվում են մինչև այսօր, և պիտի շարունակվեն...

Այս տարվա հոկտեմբերի 20-21-ին տեղի ունենալիք Միջազգային Գիտաժողովում ըննարկվելու է «Կիլիկիայի Հայկական Պետության» պատմության վերաբերող տարբեր հարցեր: Բնականաբար, գիտաժողովին ներկայացված գեկուցումները նոր լույս կսփռեն «Կիլիկիայի Հայկական Թագավորության» քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության վրա:

Այս գիտաժողովին նպաստելու միտումով ընթերցողին ենք ներկայացնում մեր աշխատասիրությամբ կազմված «Կիլիկիայի Հայկական Պետության» ժամանակագրությունը, (1080-1375) որը որոշակի պատկերացում կտա նրա ներքին և արտաքին քաղաքական պատմության:

Կիլիկիան գտնվում է Տավրոս և Ամանոս լեռնաշղթաների միջև, Միջերկրական ծովի Հյուսիս-արևելյան ափին: Բաղկացած է լեռնային և դաշտային մասերից:

Հայերը Կիլիկիայում ապրել են դեռևս հնագույն ժամանակներից: Հայերի թիվը Կիլիկիայում և Ափրիայում, սովորաբար է հատկապես Արշակունյաց թագավորության անկումից հետո (428թ.), երբ Հայաստանը կորցրեց իր պետական ինքնուրույնությունը: Բոլոր դեպքերում հայերի գանգվածային արտահոսքը դեպի Կիլիկիա ուժեղացավ 11-րդ դարում, Հայաստանում Բյուզանդական իշխանությունների կատարած բռնարարների հետևանքով և հատկապես սելջուկ-թուրքերի փոքր Ասիա ներխուժելու ընթացքում:

1071թ. բյուզանդացիների Մանգլկերտի նակատամարտում սելջուկ-թուրքերից կրած պարտությունից հետո, բյուզանդական բանակի հրամանատար փիլարտոս Վարաժնունին մի ընդարձակ իշխանություն ստեղծեց, որը տարածվում էր Մեծ Հայքից մինչև Անտիոք և Կիլիկիա՝ Մարաշ կենտրոնով: Փիլարտոս Վարաժնունու ծառայության մեջ գտնվող իշխան Ռուբենը, որը Անտիտավրոսի մարզի պաշտպանության պաշտոնն ուներ, 1080թ. սկիզբը դրեց հայկական նոր հարստության:

Մոտ 300-ամյա գոյության ընթացքում Կիլիկիայի Հայկական Պետությունը ունեցավ երկու շրջան:

1. Իշխանական կամ Ռուբինյան իշխանության շրջան (1080-1198թթ.):
2. Թագավորական շրջան (1198-1375թթ.):

Հարկ է նշել, որ հայկական աղբյուրներում Կիլիկիայի Հայկական Պետությունն անվանվում էր «Աշխարհ», «Կիլիկիան Աշխարհ» կամ «Հայոց Աշխարհ»: Ղևոնդ Ալիշանը 12-րդ դարի պատմաբանների օրինակով Կիլիկիան անվանել է Միսիան, մայրաքաղաք Միսի անունով: Իսկ միջնադարյան եվրոպայի պատմագիրները այն անվանել են «Փոքր Հայք», երբեմն էլ «Արմենիա»:

Կիլիկիայի պետական կարգը կրում էր բյուզանդական և արևմտա-եվրոպական ավատատիրական ազդեցությունը: Երկրի ներսում գործերը վարվում էին հայերեն լեզվով, իսկ օտար պետությունների հետ ֆրանսերեն և լատիներեն լեզուներով: Կիլիկիայում շրջանառության մեջ էր նաև թագավորների անունով հատված դրամները:

Ռուբինյան իշխանության հաստատումից հետո մինչև 1182թ. հայերի գլխավոր թշնամին դարձավ Բյուզանդիան, որը ձգտում էր ոչնչացնել հայկական իշխանությունը ընդհանրապես:

Հայերը գոյատևման պայքարի մեջ էին, ոչ միայն բյուզանդացիների այլ սելջուկների, իսլամական և եգիպտական մամլուքյան սուլթանության դեմ: Մոնղոլների արշավանքի ընթացքում Կիլիկիայի պետությունը բարեկամական դաշինք կնքելով մոնղոլական տիրապետության հետ կարողացավ որոշ ժամանակ խելացիորեն օգտագործել հարևան թշնամի երկրների միջև գոյություն ունեցող հակամարտությունները:

Այնուհանդերձ միշտ չէ, որ կիլիկեցիները մարտի դաշտում կարողանում էին հաղթական դուրս գալ արտաքին թշնամիների կատարած ավերիչ ասպատակություններից: Ներքին գահակալական կռիվները, իշխանների կենտրոնախույս ձգտումները, կրոնական վեճերը խանգարում էին կենտրոնական իշխանությանը միավորվելու և կատարյալ հակահարված տալու թշնամուն:

Ընդհանուր առմամբ Կիլիկիայի հայկական պետությունում ծաղկեց և բարգավաճեց Հայ մշակույթն ու արվեստը, արհեստն ու առևտուրը, ճարտարապետությունն ու քաղաքականությունը: Հատկապես մայրաքաղաք Սիսը դարձել էր մշակութային կարևոր կենտրոն, ուր գարգացել էր փիլի-

սովալուքյունը, աստվածաբանութիւնը, պատմագրութիւնը, երաժշտութիւնը, նկարչութիւնը, քանդակագործութիւնը և այլն:

Իզուր չէ, որ Հովհաննէս անունով մի հիշատակագիր Հեթումյան շըրջանի Կիլիկիան բնութագրել է, որպէս «Երկիր իմաստասիրաց և ուսումնասիրացն»:

ՃԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1080թ.

Կիլիկիայում բնակվող հայ իշխանները, պայքարելով մի կողմից բյուզանդացիների և մյուս կողմից սելջուկ-թուրքերի դեմ, կարողացան ստեղծել ինքնուրույն Հայկական պետություն Ռուբենի իշխանի գլխավորությամբ (1080-1095թ.): Այդ իշխանությունը Ռուբենի անունով կոչվեց Ռուբինյանց իշխանություն (1080-1198թթ.), ապա դարձավ Ռուբինյանց քաղաքություն (1198-1375թթ.):

1095

Ռուբեն Ա-ին հաջորդեց Կոստանտին Ա-ը (1095-1100): 1098թ. նա գրավեց Լեոնային Կիլիկիայում գտնվող Վանկա բերդը, որը և դարձավ նրա իշխանության կենտրոնատեղին:

1100

Թորոս Ա-ը (1100-1129) շարունակեց իր հոր Կոստանտինի քաղաքականությունը: 1104թ. իր իշխանությանը միացրեց Սիս և Անագարթա քաղաքները:

1129

Լևոն Ա-ի իշխանությունը (1129-1137):

1137

Բյուզանդական Հովհան. Կոմնենոս կայսրը հարձակվեց Կիլիկիայի ու Ասորիքի վրա, նպատակ ունենալով նվաճել Կիլիկիայի լեոնային մասը և վերացնել հայկական իշխանությունը: Հայերը դիմադրեցին հերոսաբար, այնուհանդերձ այդ արշավանքների հետևանքով ժամանակավոր (մինչև 1145) դադարեց հայկական իշխանությունը:

1142

Կ. Պոլսում գերության մեջ մահացավ Լևոն Ռուբինյան իշխանը: Նրա որդին Թորոսը գերությանից փախուստի դիմելով, վերադարձավ Կիլիկիա և համախմբելով հայ բնակչությանը կարևոր հաղթանակներ տարձավ բյուզանդացիների և սելջուկների դեմ և ամրապնդեց իր իշխանությունը:

1143

Անտիոքի խաչակիրները հարձակվեցին Կիլիկիայի վրա և գրավեցին մի շարք վայրեր:

1145

Կիլիկիայի իշխանությունը անցավ Թորոս Բ-ին (1145-1169):

Կիլիկիայի անկախությունը կրկին վերականգնվեց:

1149

Հայ եկեղեցու կաթողիկոսական գահը Անի քաղաքից փոխադրվեց Եփրատ գետի ափին գտնվող Հոռմկլա ամրոցը:

1152

Մամեստիայի մոտակայքում տեղի ունեցավ ճակատամարտ բյուզանդական բանակի դեմ, Թորոս Բ-ը կարևոր հաղթանակ տարավ:

1155

Սելևուկյան սուլթան Մաքսուտը հարձակվեց Կիլիկիայի վրա: հանդիպելով ուժեղ դիմադրության ստիպված եղավ նահանջել:

1158

Բյուզանդական Մանուել կայսրը հարձակվեց Կիլիկիայի և Անտիոքի դքսության վրա, բայց սելևուկների հարձակման վտանգից զգուշանալով հաշտություն կնքեց Թորոս Բ-ի հետ:

1169

Թորոս Բ-ին հաջորդեց իր փոքրահասակ որդի Ռուբենը (1169-1170), սակայն մեկ տարի անց գահին տիրացավ Ռուբենի հորեղբայր Մլեհը:

1170

Կիլիկիայի իշխան Մլեհի (1170-1176) օրոք տեղի ունեցան որոշակի փոփոխություններ արտաքին քաղաքականության մեջ: Երկրի ծովային սահմանագծերը բյուզանդացիներից և խաչակիրներից մաքրելու համար նա սկսեց համագործակցել հարևան մահմեդական պետությունների հետ: Մայրաքաղաքը Վանկա ամրոցից փոխադրվեց Սիս քաղաքը:

1176

Կիլիկիայի իշխաններն ու բարձր հոգևորականությունը, դժգոհ լինելով Հալեպի սուլթան Նուր ատ Տինի հետ Մլեհի համագործակցության քաղաքականությունից, ղավադրաբար սպանեցին նրան:

Իշխանության գլուխ անցավ Մլեհի եղբորորդի Ռուբեն Գ-ը (1176-1187): Նա ազատագրեց Ատանան և Տարսուհը:

1187

Իշխանության գլուխ անցավ Լևոն Բ-ը (1187-1219): Նա իր գերիշխանությանը ենթարկեց Լամբրոնի Հեթումյաններին և մի շարք հաղթանակներ տանելով խաչակիրների դեմ, իր իշխանության սահմանները առավել ընդարձակեց: Լևոն Բ-ի օրոք Կիլիկիան դարձավ տնտեսապես զարգացած և քաղաքականապես հզոր մի իշխանություն:

1194

Ամբողջ Կիլիկիան միավորվեց Լևոն Բ. Ռուբինյանի իշխանության ներքո:

1198

Տարսոնում տեղի ունեցավ Լևոն Բ-ի թագադրության հանդիսավոր արարողությունը: Այն մեծ իրադարձություն էր, քանի որ վերականգնվեց հայկական կործանված թագավորությունը:

1216

Սելուկները ներխուժեցին Կիլիկիա: Կապանի ամրոցի մոտ տեղի ունեցած ահեղ մարտերում հայկական զորքը պարտություն կրեց: Պարտության գլխավոր պատճառը այն էր, որ Լևոն Բ-ին ընդդիմադիր իշխաններին մի քանիսը լքեցին ռազմի դաշտը:

1219

Վախճանվեց Լևոն Բ Մեծագործը, հետնորդներին թողնելով բարգավաճ ~~և վերելք պարտք մի գործը պետություն:~~

1220

Սկսվեց մոնղոլ-թաթարական վաչկատուն ցեղերի արշավանքը դեպի Միջին և Մերձավոր Արևելք: Մի շարք երկրներ նվաճելուց հետո 1240-ական թվականներին սպառնացին նաև Կիլիկիան Հայկական Պետության գոյությանը:

1226

Լևոն Բ-ի մահից հետո, չնայած թագաժառանգն էր նրա դուստրը՝ Զապելը, բայց թագի հավակնորդների՝ Հեթումյանների և Ռուբինյանների միջև պայքար սկսվեց իշխանության համար: Ի վերջո Հեթումի և Զապելի ամուսնությամբ այդ իշխանական տները միավորվեցին և Հեթում Ա-ը դարձավ թագավոր:

1236

Սկսվեց հայերի ներգաղթը դեպի Կիլիկիա՝ մոնղոլների կողմից Հաստանի նվաճման հետևանքով:

1243

Հեթում Ա-ի նախածեղությունը կնքվեց հայ-մոնղոլական բարեկամական դաշինք: Կիլիկիան զերծ մնաց ահավոր ավերածություններից և պահպանեց իր գոյությունը:

1246

Սելուկները հարձակվեցին Կիլիկիայի վրա և պաշարեցին Տարսոնը: Սելուկներին օժանդակում էր Կոստանտին Լամբրոնացի իշխանը:

1249

Կիլիկիան մի շարք ռազմական հաղթանակներ տարավ իկոնյան սելյուկյան սուլթանության դեմ:

1253

Հեթում Ա. թագավորի ուղևորությունը Կարակորում և հայ-մոնղոլական պայմանագրի կնքումը:

1256-1262թթ.

Հեթում Ա-ը մի շարք հաջող արշավանքներ ձեռնարկեց իկոնյան սելյուկների և Կարամանի թուրքմենների դեմ:

1263

Մոնղոլների նախածեղությամբ Հեթում Ա-ը հաշտության պայմանագիր կնքեց Իկոնիայի Սուլթան Ռուքն աու-Տինի հետ:

1266

Եգիպտոսի սուլթան Պեյպարսը, խաչակիրների իշխանություններին վերջ տալու քաղաքականությունից դրդված, հրամայեց հարձակվել նաև Կիլիկիայի վրա: Մոնղոլները օգնության չհասան և հայկական բանակը պարտություն կրելով նահանջեց: Եգիպտական զորքերը գրավեցին և ավերեցին Սիսն ու այլ քաղաքներ, գերեվարելով բազմահազար բնակչության: Պարտությանը նպաստեց հայ իշխանների միջև գոյություն ունեցող հակասությունները: Շատերը լքեցին մարտի դաշտն ու փախան:

1268

Հեթում Ա-ը որոշակի գիշումներ կատարելով հաշտություն կնքեց Եգիպտոսի սուլթանության հետ:

1270

Լևոն Գ-ը դարձավ հայոց թագավոր (1270-1289):

Եգիպտոսի մամլուքները ներխուժեցին Կիլիկիա, ավերեցին և ավարի մատնեցին մի շարք քաղաքներ: Լևոն Գ-ը ամրացավ Սիս քաղաքում, կազմակերպեց դիմադրությունը և կասեցրեց թշնամու առաջխաղացումը: Այնուհետև Մմբաու սպարապետի հրամանատարությամբ հայկական բանակը դուրս բռնեց մամլուքներին Կիլիկիայի սահմաններից:

1278-1279

Կիլիկիան նվաճելու նպատակով Եգիպտոսի Մամլուքները ասպատակեցին Կիլիկիայի սահմանամերձ շրջանները և պաշարեցին Հոռմկլան: Հայկական բանակը հակազորոնով կարողացավ երկրից հեռացնել թշնամուն:

1285

Լևոն Գ-ը ծանր գնով հաշտության պայմանագիր կնքեց Եգիպտոսի հետ 10 տարի ժամանակով, նկատի ունենալով, որ առանց մոնղոլների օգնության հնարավոր չէ պաշտպանել երկիրը:

1289

Լևոն Գ-ին հաջորդեց որդին՝ Հեթում Բ-ը: Օգնության համար նա դիմեց մոնղոլներին, իսկ այնուհետև Ֆրանսիայի և Անգլիայի թագավորներին, բայց դիմումները մնացին անհետևանք:

1292

Եգիպտոսի մամլուքները, խախտելով 1285թ. հաշտության պայմանագիրը, հարձակվեցին Կիլիկիայի վրա: Միամսյա պաշարումից հետո գրավեցին Հոռմկլա կաթողիկոսանիստ ամրոցը և մի շարք այլ ամրոցներ և քաղաքներ:

1293

Կիլիկիո կաթողիկոսութունը փոխադրվեց Սիս, որը մինչև 1441թ. դարձավ կաթողիկոսանիստ քաղաք:

1296

Հեթում Բ-ի եղբայրների միջև տեղի ունեցան գահակալական կռիվներ, որոնք վատ ազդեցություն ունեցան երկրի տնտեսական և քաղաքական կյանքի վրա: Նույն թվականին, երբ Հեթում Բ-ը մեկնեց Կ. Պոլիս, նրա եղբայրը՝ Սմբատը, օգտվելով առիթից իրեն հռչակեց թագավոր: Այնուհանդերձ 1299թ. Հեթում Բ-ը կրկին իշխանությունը վերցրեց իր ձեռքը:

1303-1305

Եգիպտական բանակները կրկին ավերիչ հարձակումներ կատարեցին Կիլիկիայի վրա: Ահնուհանդերձ պարտություն կրելով հաշտություն կընքեցին:

1305

Հեթում Բ-ը հրաժարվեց գահից: Թագավոր դարձավ Լևոն Գ-ը:

1307

Սիսում հրավիրվեց եկեղեցական ժողով, որտեղ քննարկվեց կաթոլիկ և հայ եկեղեցիների միության հարցը: Ընդունված Միության որոշումը չգործադրվեց կյանքում: Այն առիթ տվեց իրարամերժ խմբավորումների, որոնք առավել խախտեցին քաղաքական միասնությունը:

1307

Կիլիկիայում գտնվող մոնղոլական հրամանատար՝ Փիշարդուն, որն ընդունել էր մահմեդական կրոնն ու նպատակ ուներ զավթել Կիլիկիան, լատինամոլության պատրվակով գերեց և սպանեց Լևոն Գ. թագավորին և 40 հայ իշխաններին Անազարբայում: Այդ ուխտադրուժ դավադրությանը խզվեց հայ մոնղոլական դաշինքը:

1308

Լևոն Գ. թագավորի հորեղբայր Օշինը հայկական գործերի գլուխ անցած հարձակվեց Փիշարդունի վրա և դուրս քշեց Կիլիկիայից:

Օշինը օծվեց հայոց թագավոր (1308-1320):

1309

Ատանայում տեղի ունեցավ կրոնական մի նոր ժողով, կյանքի կոչելու 1307թ. Սիսի եկեղեցական ժողովի որոշումները: Այս և նախկին ժողովի հայ եկեղեցին Հոմի պապին ենթարկելու որոշումները կրկին մնացին քղթի վրա:

1314

Մոնղոլական մի շոկատ ավարառության նպատակով արշավանք կատարեց Կիլիկիայի վրա:

1318

1318

Եգիպտոսի մամլուքները և Իկոնիայի կարամանցի թուրքմենները ավերիչ արշավանքներ կատարեցին Կիլիկիայի վրա:

1320

Օշինի մահից հետո իշխանության գլուխ անցավ որդին Լևոն Ե-ը: Նրա օրոք կրկին բռնկվեցին ներքին երկպառակություններ: Արտաքին դաշտում մոնղոլական պետությունը կործանվեց: Ֆրանսիայի և Անգլիայի միջև սկսվեց երկարատև պատերազմ: Կիլիկիան մահմետական պետությունների օղակում մնաց առանց դաշնակցի:

1321-1322

Կիլիկիան մեծ վնաս կրեց եգիպտական գործերի հաճախակի հարձակումներից: Հատկապես Այաս նավահանգստային քաղաքի և բերդի գրավումը քաղաքականապես և տնտեսապես թուլացրին երկիրը:

1323

Լևոն Ե-ը ստիպված ծանր պայմաններով հաշտության պայմանագիր կնքեց եգիպտոսի Նասիպ Սուլթանի հետ:

1336-1337

Մամլուքների հրամանով Հալեպի Ամիր Ալթուն Պուղայի գործերը հարձակվեցին Կիլիկիայի վրա և կողոպտելով ու ավերելով գրավեցին մի շարք քաղաքներ:

1343

Պապի կողմնակից իշխանները Լևոն Ե-ի մահից հետո գահ բարձրացրին Կոստանտին Գ-ին (Գվիտոն Լուսինյան): Նա Կիլիկիայի հայութան ստիպեց ընդունել կաթոլիկությունը, և ձգտեց արքունիքում վեցսյակով հայոց լեզվի գործածությունը:

1345

Հայ իշխանները, դժգոհ լինելով Կոստանտին Գ-ի ներքին և արտաքին քաղաքականությունից, Օշին Բակուրանի գլխավորությամբ սպանեցին նրան Ատանայի իր պալատում:

Գահ բարձրացավ Հեթումյան գերդաստանից Կոստանտին Գ-ը:

1346-1347

Արևմուտքի հետ կապերը ամրացնելը առիթ ծառայեց, որպեսզի թուրքմեններն ու մամլուքները արշավեն և ավերեն Կիլիկիան:

1360

Սիսում գումարված եկեղեցական ժողովը չէղյալ հայտարարեց կաթոլիկ եկեղեցուն մերժեցնելու նախկին ժողովների բոլոր որոշումները:

1365

Գահ բարձրացավ Կոստանտին Ե-ը: Նրա թագավորության օրոք Կիլիկիայի մեծ մասը գրավվեց մամլուքների և թուրքմենների կողմից: Տեղի ունեցած ասպատակությունների հետևանքով հայերը արտագաղթեցին Հոռոս և հունական այլ քաղաքներ:

1374

Լևոն Զ-րդ Լուսինյանը թագավոր օծվեց նախ լատին ծիսակատարութեամբ և ապա Պողոս կաթողիկոսի ձեռքով հայկականով: Նրա օրոք առավելի վատթարացավ երկրի քաղաքական և տնտեսական վիճակը: Մամուլքները գրոհով գրավեցին Սիսը և գերեվարեցին թագավորին, Պողոս կաթողիկոսին և իշխաններին:

1375

Կիլիկյան Հայկական Թագավորության անկումը.

Կիլիկիայի մեծ մասը Սիս քաղաքով անցավ եգիպտական մամուլքների գերիշխանության տակ:

1393

Լևոն Զ-ը եվրոպական երկրներում երկարատև շրջագայեց, օգնություն խնդրելով, որպեսզի խաչակրաց արշավանք կազմակերպվի եգիպտոսի դեմ: Սակայն ձեռնուճայն վերադառնալով Փարիզ, հուսահատ վիճակում վախճանվեց և թաղվեց այնտեղ:

1402-1405

Հայ ժողովրդի զանգվածային արտագաղթը Կիլիկիայից:

Օգտագործված գրականություն

1. Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հատոր 3, Երևան, 1976:
2. Ալեքսեյ Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Երևան, 1978:
3. Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 1952 (ռուսերեն):
4. Աշոտ Սարգսյան, Արարատ Հակոբյան, Հայոց պատմություն, Երևան, 1997:

«ՓԱՐՈՍ», ՀՈԿՏԵՄԲԵՐ 15, 2000

ՆՈՐ ՕՐ • ԸՄԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 21, 2000

Նոր Հայաստան Օրաթերթ

ԸՄԲԱԹ, ԴԵԿՏ. 30, 2000, Թ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ և ՍԵՎՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

1877-78 թուականներին տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմում, ռուսական զորքերը մեծ յաջողութիւնների հասան Պալքանեան և Կովկասեան ռազմաճակատներում: Պատերազմը աւարտուեց Ռուսաստանի կատարեալ յաղթանակով: Պուլկարները և հայերը, որպէս օսմանեան ծանր լծից իրենց ազատարարների, ցնծութեամբ դիմաւորեցին ռուսական բանակի յաղթական երթը: Աստիճանաբար մեծ վերելք ապրեց կեղեքուած ժողովուրդների ազգային ազգագրական պայքարը:

1878 թ. Մարտի 3ին 4. Պուխից 12 քմ. Հեռաւորութեան վրայ գտնուող Սան Սթեֆանոյում ստորագրուեց հաշտութեան պայմանագիրը: Այն, բաղկացած էր 29 կէտերից, որի 16րդ յօդուածը վերաբերում էր Արեւմտեան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու մասին:

Այսպիսով Բարձրագոյն Դուռը ճանաչում էր Հայաստանի և հայ ազգի գոյութիւնը Օսմանեան կայսրութիւնում՝ և բարենորոգումների անուան տակ Հայկական Հարցը դառնում էր միջազգային դիւանագիտութեան հարց: Բնականաբար եւրոպական մեծ տէրութիւնները չէին հանդուրժելու Ռուսաստանի միակողմանի յաջողութիւնը: Ուստի պահանջեցին միջազգային վեհաժողով հրաւիրել և համատեղ քննարկել հաշտութեան պայմանագիրը:

Այս իրավիճակում, 1878 թ. Յունիսի 13ին բացուեց Պերլինի վեհաժողովը մասնակցութեամբ՝ Անգլիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Աւստրո-Հունգարիայի, Թուրքիայի պատուիրակների և մի քանի փոքր երկրների ներկայացուցիչների: Վեհաժողովին մասնակցելու համար Պերլին էին մեկնել Խրիմեան Հայրիկը, նրա քարտուղար Մինաս Զերազը, Նար Պէյը, Ստեփան Փափազեանը: Սակայն պուլկարական և հայկական պատուիրակութիւններին հնարաւորութիւն չտրուեց մասնակցելու վեհաժողովին:

Յուլիսի 8ին Անգլիայի արտաքին գործերի նախարար՝ Սոլսպերին վեհաժողովին ներկայացրեց հայերին վերաբերող յօդուածի իր մշակած նախագիծը, որը մասնակի խմբագրութեամբ ընդունուեց, որպէս 61րդ յօդուած հայկական բարենորոգումների անուան տակ Հետեւեալ բովանդակութեամբ. «Բարձրագոյն Դուռը յանձն է առնում հայկական վայրերում անյապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգութիւնը քրտերից և չէրքէզներից: Այն նպատակով ձեռնարկուած միջոցառումների մասին նա պարտաւոր է պարբերաբար հաղորդել պետութիւններին, որոնք պէտք է հսկեն դրանց գործադրութեանը»:

Իրականում, Պերլինի վեհաժողո-

վից յետոյ, երբ Հայկական Հարցը միջազգային բնոյթ ընդունեց, սուլթանական կառավարութեան ազգային եւ կրօնական հալածանքները, կեանքի ու գոյքի անապահովութիւնը, հարկային ծանր գանձումները ու գաւառային պաշտօնեաների չարաչահումներն աւելի մեծ չափերի հասան:

Հայ ժողովուրդը նկատելով Պերլինի վեհաժողովից յետոյ մեծ պետութիւնների անտարբեր վերաբերմունքը Հայկական Հարցի նկատմամբ, իր փրկութեան համար բռնեց սեփական ուժերով պայքարելու ուղին: Բուռն վերելք ապրեց օսմանեան բռնակալութեան լծից հայ ժողովրդի ազատագրման շարժումը: Սակայն թշնամու գերակշռող մարտական սպառազինութեան ղէմ չկարողացաւ պայքարը հասցնել իր յաղթական աւարտին:

1894 թ. Օգոստոսին եւ հետագայում, թուրքական բանակի ծաւալուն յարձակում նախաձեռնեց Սասունի եւ չրջակայ նահանգների վրայ: Տեղի ունեցաւ մի սարսափելի ջարդ, որին զոհ գնացին 300,000 անմեղ հայեր:

1895 թ. Մայիսի 11ին Ռուսաստանը, Ֆրանսիան եւ Անգլիան համատեղ մի ծրագիր ներկայացրին Բարձրագոյն Դռանը հայաբռնակ նահանգներում (էրզրում, Պիթլիս, Վան, Սերաստիա, Սարրերդ եւ Տիարպեքի) բարենորոգումներ անկացնելու համար: Այն վաւերացուեց Բարձրագոյն Դռան կողմից Հոկտեմբերի 18ին, բայց չգործադրուեց կեանքում:

Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում հայերի բնաջնջման վերաբերող նենգ արարքները հետագայում նոյնութեամբ որդեգրեցին նաեւ 1908 թ. իլսանութեան գլուխ եկած երիտթուրքական կառավարութիւնն ու «Իթիհատ վէ թերաքքի» (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) կուսակցութեան պարագլուխները: Դրա վառ ապացոյցն է 1909 թ. Ապրիլին Ատանայում եւ Կիլիկիայի մի շարք վայրերում տեղի ունեցած 30,000 հայերի կոտորածները, որոնք նախօրօք նախապատրաստուած եւ հրահրուած էին երիտթուրքերի կողմից:

Իսկ Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրէին արեւմուտահայութեան վիճակը առաւել վատթարացաւ: Տուեալ ժամանակ հայկական հալածանքների հիմնական դրդապատճառը կապուած էր Հայկական Հարցի աշխուժացման հետ, քանի որ հայաբռնակ 6 նահանգներում բարենփոխումներ անցկացնելու նպատակով բանակցութիւններ էին տեղի ունենում մեծ տէրութիւնների չրջանակներում: Չնայած այն ի վերջոյ ստորագրուեց թուրքական կառավարութեան կողմէ (Փետրուարի 8, 1914 թուին) սակայն հենց սկզբից թուրքերը ղէմ էին դրսից պարտադրուող բարենորոգումներին եւ հսկողութեանը եւ երբեւէ նպատակ չունէին կեանքի կոչելու այն:

Հայկական Հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրեցին արեւմուտահայութեանը ի սպառ ջնջելու հա-

նապարհը: Եւ այդ դաժան ծրագրի իրագործման համար ժամանակը հանդիսացաւ Առաջին Համաշխարհային պատերազմը: 1915-1916 թ. երիտթուրքերին կառավարութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով նահատակուեցին մէկուկէս միլիոնից աւելի անմեղ հայեր:

1918 թ. աւարտուեց Առաջին Համաշխարհային պատերազմը եւ եւ Հոկտեմբերի 30ին ստորագրուեց Մուրսուի զինադադարի պայմանագիրը:

Իսկ այնուհետեւ 1919 թ. Յունուարի 18ին Փարիզում բացուեց խաղաղութեան խորհրդաժողովը: Սորհրդաժողովին մասնակցելու համար կազմուեց Հայաստանի կառավարական պատուիրակութիւնը՝ Աւետիս Ահարոնեանի գլխավորութեամբ: Պատուիրակութեանը յանձնարարուած էր մեծ տէրութիւնների ուշադրութիւնը գրաւել Մեծ Եղեռնի եւ Հայկական Հարցի արդարացի լուծման խնդրի վրայ: Սորհրդաժողովին մասնակցելու համար Փարիզում էր գտնուում նաեւ Պողոս Նուպար փաշայի գլխավորած Արեւմտահայ Ազգային պատուիրակութիւնը:

Նկատի ունենալով ԱՄՆի նախագահ Վուորո Ուիլսոնի Հայաստանի նկատմամբ ունեցած բարեացակամ վերաբերմունքը, հայկական պատուիրակութիւնը ցանկութիւն յայտնեց Միացեալ Անկախ եւ Ազատ Հայաստանի մանդատը (Հովանաւորութիւնը) յանձնել ԱՄՆին:

Այնուհետեւ 1920 թ. Ապրիլի 19-26ը Իտալիայի Սան Ռեմօ քաղաքում տեղի ունեցաւ Հաշտութեան պայմանագրի նախագծի պատրաստման աշխատանքների խորհրդաժողովը: Հայաստանի հարցի քննարկման ընթացքում, խորհրդաժողովը որոշեց դիմել ԱՄՆի նախագահ Վուորո Ուիլսոնին՝ ընդունելու Հայաստանի մանդատը:

Դժբախտաբար Յունիս ամսին ԱՄՆի Մերակոյտը ձայներէ մեծամասնութեամբ մերժեց ընդունել Հայաստանի Հովանաւորութիւնը:

1920 թ. Օգոստոսի 10ին ստորագրուեց Սեւրի (Փարիզի մօտ) դաշնագիրը: Հայաստանի անունից այն ստորագրեց Աւետիս Ահարոնեանը: Դաշնագրի 88-93 յօդուածները վերաբերում էին Հայաստանին, ուր Օսմանեան Թուրքիան պարտաւորուած էր ճանաչել Միացեալ Հայաստանի տարածքը:

Իր ժամանակին Հայ ժողովուրդը մեծ յոյսեր կապեց Սեւրի դաշնագրին, քանի որ այնտեղ բերուած յօդուածները լիովին հաստատում էին Հայ ժողովրդի պատմական անվիճելի եւ արդարացի իրաւունքները: Ստեղծուելու էր միացեալ եւ անկախ Հայաստան:

Հայ ժողովրդի բնօրրանում՝ Պատմական Հայաստանում:

Այնուհանդերձ, Հայաստանի համար խիստ կարեւոր այս փաստաթուղթը չվաւերացուեց եւ մնաց թղթի վրայ, քանի որ դաշնակից պետութիւնները բողոքովին մտահոգուեցին չցուցարեցին

Արևմտեան Հայաստանին վերաբերող կէտերը կեանքի կոչելու խնդրում, այլ ընդհակառակը, Հայտույթեան ձեռք մեկնելով՝ Քէմայական Թուրքիային, մոռացութեան մատնեցին այն: Իսկ 1923 թ. Յուլիսի 24ի Լոզանի պայմանագրով ընդհանրապէս խաչ քաչեցին դրա վրայ:

Նշենք նաեւ, որ Հայաստանին վերադարձուող նահանգները տուեալ ժամանակ գտնուում էին քեմայականների իշխանութեան տակ, որոնք ոչ միայն չճանաչեցին Օսմանեան պետութեան կողմից ստորագրուած Սեւրի դաշնա-

գիրը, այլևս նոր արշաւանք նախաձեռնեցին Արեւելեան Հայաստանը ոչնչացնելու համար:

Այսօր Հայկական Հարցի լուծումը կապուած է 20րդ դարի Հայոց Առաջին Ցեղասպանութեան միջազգային չափանիշով ճանաչումից եւ դատապարտումից, որպէսզի արդար հատուցում ստանայ նրա արեան, հողային եւ նիւթական պահանջարկը: Դրանով կը վաւերացունեն եւ կեանքի կը կոչուեն 1920 թ. Օգոստոսի 10ի Սեւրի դաշնագրի արդար որոշումները՝ Պատմական Հայաստանի տարածքի նկատմամբ:

«ԱՍՊԱՐԷԶ», ԾԱԲԱԹ, 12 ՕԳՈՍՏՈՍ 2000

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 86-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՊՐԻԼ 2000 - ԱՊՐԻԼ 2001

Լրացաւ Հայոց Մեծ Եղեռնի 86-րդ տարելիցը: 86 տարի առաջ, տեղի ունեցաւ 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը Հայ ժողովրդի նկատմամբ: Հետեւանքը եղաւ այն, որ Հայ ժողովուրդը զրկուեց իր բնօրրանից՝ Արևմտեան Հայաստանից եւ նիւթական հսկայական կորուստի հետ ունեցաւ 1,5 միլիոնից աւելի անմեղ զոհեր:


2000թ. Ապրիլի 24-ին, Մեծ Եղեռնի 85-րդ տարելիցի առթիւ, Հայաստանի Հանրապետութեան ղեկավարները, հոգեւոր առաջնորդները, օտարերկրեայ դիւանագէտները, հիւրերը, Միջեռնակաբերդի բարձունքում, մէկ րոպէ լուռութեամբ զլուխ խոնարհեցին ցեղասպանութեան յուշակոթողի յաւերժական կրակի առջև:

Աշխարհի զանազան Հայաշատ քաղաքներում տեղի ունեցան զանգուածային բողոքի ցոյցեր, քայլարշաւներ, սգոյ Հանդիսութիւններ: Աթէնքի ու Սալոնիկի մէջ, Հայ ցուցարարները հրկիզեցին թուրքական դրոշակը դեսպանատան եւ հիւպատոսարանի առջև:

Հակառակ թուրքական կառավարութեան ներդրած բուռն հակազդեցութեան եւ սպառնալիքներին, Եւրոպայի խոշորագոյն մի շարք երկրներ ճանաչեցին եւ դատապարտեցին Հայոց ցեղասպանութիւնը, այդ թւում՝ Ֆրանսիական եւ Իտալական:

Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միացեալ աշխատանքի շնորհիւ, Եկեղեցիների Համաշխարհային Սորհուրդը որոշում կայացրեց Ապրիլ 24-ի յաջորդող Կիրակին, խորհրդի անդամ աւելի քան 375 եկեղեցիների մէջ նշել որպէս «Հայ ժողովուրդի նահատակութեան եւ յարութեան օր»: Այդ օրը

Կիլիկյան մամբրակար, վեցնտիկի Միլիթարիում միտոս կիլիկյան մամբրու վանքում պահվող մի ձեռագրից:



աշխարհի բոլոր կողմերը, ԵՀՆ-ի անդամ բոլոր եկեղեցիների մէջ, Հայ ժողովուրդի նահատակութեան եւ յարութեան յատուկ յիշատակութիւն պիտի կատարուի Պատարադի ընթացքում:

2000թ. Ապրիլ 24-ին, Հայոց Յեղասպանութեան 85-րդ տարելիցի առթիւ, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանը Հանդէս եկաւ յատուկ ուղերձով: Ահա մի հատուած այդ ուղերձից:

«85 տարի առաջ, Ապրիլ 24-ին, Հայ մտաւորականութեան զանգուածային ձերբակալութիւններով, Օսմանեան Թուրքիայում սկսուեց Հայց Յեղասպանութիւնը: Այսօր, գլուխ խոնարհելով Հայոց Մեծ Եղեռնի միլիոնաւոր զոհերի յիշատակի առջեւ, մենք ստիպուած ենք արձանագրել, որ 85 տարի անց, միջազգային հանրութիւնը դեռ չի տուել դարասկզբի ողբերգական իրադարձութիւնների համարժէք զնահատականը: Աւելին՝ մարդկութեան դէմ նման ոճրագործութիւն կատարելու եւ անպատիժ մնալու նախադէպը դուռ է բացել նոր համանման յանցագործութիւնների: Այս համատեքստում, օրինաչափ է, որ ցեղասպանութեան արդիւնքում, իր Հայրենի բնօրրանից զրկուած սփիւռքահայութեան եւ իր անկախ սեփականութիւնը վերագտած Հայրենարնակ մեր ժողովուրդի համար, Ապրիլ 24-ը պիտի վերածէր ցեղասպանութեան դափնապարտման եւ պատմական արդարութեան վերականգնման պահանջի խորհրդանշական օրուար»: (Ընդգծումը մերն է.-Ա.Փ., տես՝ «Նոր Հայաստան», Ապրիլ 26, 2000թ., էջ 6):

Այո՛, Հայոց Յեղասպանութիւնը պիտի դատապարտուի եւ պատմական արդարութիւնն էլ՝ վերականգնուի:

Ամենայն հաւանութիւն տալով Հայաստանի նախագահի ուղերձի բովանդակութեան այս եւ յաջորդ դրոյթներին, այնուհանդերձ պիտի մատնանշենք, որ բոլորովին անընդունելի ենք

համարում 2001թ. Յունուարի վերջերին Ստրասբուրգում տեղի ունեցած մամլոյ ասուլիսում եւ Թուրք լրագրող Մեհմետ Պիրանտին տուած հարցազրոյցի ընթացքում արտայայտած այն մտքին, որ Թուրքիայի կողմից ցեղասպանութեան ընդունումից յետոյ, Հայաստանը հողային իրաւական պահանջ չի ունենայ Թուրքիայից:

Ռոբերտ Քոչարեանի այս յայտարարութիւնը Հայաստանում եւ սփիւռքում խրաքանչիւր հայի մօտ առաջացրեց խորը դայրոյթ եւ վրդովմունք, նոյնիսկ պահանջուեց հերքել այն:

Հայոց Յեղասպանութեան ճանաչումը ու մեր պահանջատիրութիւնը անսակարկելի են: Ներկայի Թուրքական կառավարութիւնը ժառանգորդն է ու պատասխանատուն կատարուած այդ ծայրագոյն յանցագործութեան եւ պէտք է ճանաչի հայերի ցեղասպանութիւնը ու արդար հատուցում տայ նրա արեան, հողային ու նիւթական պահանջատիրութեանը:

Ստորեւ բերուած ժամանակագրութիւնը որոշակի գաղափար եւ պատկերացում է տալիս մէկ տարուայ ընթացքում, Ապրիլ 2000, Ապրիլ 2001, ամբողջ աշխարհում հայերի ցեղասպանութեան շուրջ ծաւալուած աշխատանքներին, իրադարձութիւնների եւ դատապարտման մասին:

2000թ.

Ապրիլ 17

Կ. Պոլսի Գարթալի քաղաքապետութիւնը նախաձեռնեց շրջանում գտնուող Ս. Նշան Հայոց եկեղեցու տարածքի մի մասը օգտագործել ճանապարհաչիտութեան համար: 1972թ. եկեղեցու մի մասը արդէն բռնագրաւուել էր առանց փոխարժէքը վճարելու:

Ապրիլ 18

-Գալիֆորնիայի Կլենտէյլի քաղաքապետարանի խորհուրդը հրապարակեց Հայոց Յեղասպանութեան 85-ամեակը ոգեկոչող հռչակագիր:

ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգի խորհրդարանը միաձայն որդեգրած բանաձևով, Ապրիլ 24-ը հռչակեց հայերի ցեղասպանութեան նահատակների ոգեկոչման օր:

Ապրիլ 19

- Նիւ Եորքի նահանգապետ Ջորժ Փաթարի յատուկ հռչակագրով դատապարտեց հայերի ցեղասպանութեան Թուրքիայի ուրացումը եւ Ապրիլ 24-ը նահանգից ներս հռչակեց Հայոց Եղեռնի նահատակների ոգեկոչման օր:

- Լոս Անճելըսի քաղաքապետարանում տեղի ունեցաւ Եղեռնի 85-ամեակի ոգեկոչման նուիրուած հանդիսութիւն ՀՅԴ-ի Հայ Դատի յանձնախումբի կազմակերպութեամբ: Հրապարակուած հռչակագրում քաղաքապետարանը կրկին հաստատեց, որ ճանաչում է Ապրիլ 24-ը, որպէս Հայոց Յեղասպանութեան սգատօն:

Ապրիլ 20-21

Երեւանի «Հրաչեայ Աճառեան» համալր-սարանում տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի 85 ամեակին նուիրուած «Հայոց Յեղասպանութիւն. պատճառներն ու հետեւանքները» խորագրով երկօրեայ գիտաժողով:

Ապրիլ 23

Ֆրանսիացի մեծ գրող Անատոլ Ֆրանսի գերեզմանից մի բուռ հողով լցուած աճիւնասափորը Հայաստան բերուեց եւ ամփոփուեց Միժեռնակարերդի Յուշահամալիրի պատի մէջ:

Ապրիլ 24

- Ուկրաինայի Մաքսիքա քաղաքում (Դոնեցկ) գտնուող հայկական եկեղեցու բակում բացուեց Հայոց Յեղասպանութեան նուիրուած աղբիւր-յուշարձան:

- Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի առթիւ, Բերիոյ թեմի Ազգային Առաջնորդարանը (Հալէպ) կազմակերպեց ուխտագնացութիւն Ղէպի Տէր Զօր, Հայոց Յեղասպանութեան 85-րդ տարելիցի առթիւ:

- Իսրայէլի կրթութեան նախարար Եոսի Սարիտ Ս. Յակոբ վանքում տեղի ունեցած Հայոց

Յեղասպանութեան ոգեկոչման ձեռնարկի ընթացքում, յայտարարեց, որ Իսրայէլի դպրոցներում Ողջակիղման Հետ միասին պիտի դասուանդուի նաեւ Հայոց Յեղասպանութիւնը:

- Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը Հայոց Յեղասպանութեան 85-րդ տարելիցի առթիւ Տէր Զօր կատարած իր ուխտագնացութեան ընթացքում, յատուկ կոնդակով Տէր Զօրը հռչակեց Համազգային Ուխտատեղի:

- Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցու կից, տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի նահատակների յիշատակին նուիրուած յուշակոթող-խաչքարի բացումը:

- Թուրքիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հենրի Մորգենթաուի թողը՝ Հենրի Մորգենթաու III-ը, 1916 տուար խորհրդանշական գումար նուիրեց Վաշինգթոնի Հայկական Ազգային Ինստիտուտին (ANI): Տուեալ գումարը օգտագործուելու է Վաշինգթոնի Հայոց Յեղասպանութեան Թանգարանի եւ յուշակոթողի կառուցման աշխատանքներին:

Մայիս 2

ԱՄՆ-ի Ուիսքոնսինսոն նահանգի խորհրդարանը վաւերացրեց «Ապրիլ 24-ը որպէս Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման օր, ամբողջ նահանգի տարածքում» բանաձևը:

Մայիս 8

Գրողների միջազգային PEN ընկերակցութիւնը Նիւ Եորքի Հանրային գրադարանի մէջ յատուկ հանդիսութեամբ ոգեկոչեց Հայոց Յեղասպանութեան զոհ՝ 85 հայ գրողներին յիշատակը:

Մայիս 9

Գալիֆորնիայի նահանգային ծերակոյտի դատա-իրաւական յանձնաժողովը միաձայն որդեգրեց մի օրինագիծ, ուր իրաւունք է տրուում Հայոց Յեղասպանութեան զոհերին կամ նրանց ժառանգներին դիմելու դատարան, ապահովագրական ընկերութիւններից վնասուց հատուցում պահանջելու համար:

Մայիս 10

«Նիւ Եորք Թայմս» թերթի Թուրքիայի թղթակից Սթէֆըն Քինզլըրը, Մայիս 10-ի համարում հրատարակեց «Թուրքական շրջանը վերյիշում է հայերի կոտորածները» յօդուածը, ուր Նարբերդի (Էլազիկ) մի քանի թուրք բնակիչներ հաստատում են, որ 1915թ. տեղի է ունեցել հայերի կոտորած:

Մայիս 11

Լիբանանի խորհրդարանը միաձայն որդեգրեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման հետեւեալ բանաձեւը. «Օսմանեան իշխանութիւնների կողմից 1915-ին գործադրուած ջարդերի 85-րդ տարելիցի առիթով, ջարդեր որոնց զոհ գնացին 1,5 միլիոն հայեր, Լիբանանի խորհրդարանը ճանաչում եւ դատապարտում է Հայ ժողովուրդի դէմ գործադրուած ցեղասպանութիւնը եւ ամբողջական զօրակցութիւնն է յայտնում, Հայ քաղաքացիների պահանջներին, նկատելով, որ այս ցեղասպանութեան միջազգային ճանաչումը նախապայման է ապագայի հաւանական նմանօրինակ ոճիրների կանխարգելման»:

- Փարիզի շրջանի Լիլա քաղաքում, բացուեց Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած խաչքար-յուշարձան:

Մայիս 13

Երուսաղէմի Jerusalem Post թերթի Մայիս 13 համարում հրատարակուեց «Ողբերգութիւն, որ այլեւս չի կարելի անտեսել» յօդուածը, ուր փաստուում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Օսմանեան Կայսրութիւնում ոչնչացուել են 1,5-2 միլիոն հայեր:

Մայիս 28

Զօրավար Գրոյի (Դրաստամատ Կանայան) աճիւնը Հայաստանի Հանրապետութեան 82-րդ տարեդարձի օրը պաշտօնական ծէսով ամփոփուեց Բաշ-Ապարանի հերոսամարտի յուշահամալիրում:

Յունիս 7

Ֆրանսահայ կաղմակերպութիւնները միասնաբար դիմումնագրեր ուղարկելով բոլոր բարձրաստիճան պաշտօնեաներին, պահանջեցին, որպէսզի Ֆրանսիայի ծերակոյտը ճանաչի Հայոց Յեղասպանութեան բանաձեւը:

- Ըստ մամուլի Հաղորդագրութեան, Թուրքիայի Սիւրիհիսար գաւառում գտնուող Հայոց Ս. Երրորդութիւն եկեղեցին վերանորոգուելուց յետոյ վերածուելու է Թանգարանի:

Յունիս 9

New York Times թերթում լոյս տեսաւ մի ծանուցում, ուր հրէական ողջակիզումի 126 մասնագէտ-գիտնականներ հաստատելով Հայոց Յեղասպանութեան փաստը, արեւմտեան երկրներից պահանջեցին, որպէսզի Թուրքիան ճանաչի Հայոց Յեղասպանութիւնը:

Յունիս 11

Աթէնքի Ռենտի-Յուվալտիլաքայի հրապարակում բացուեց Մեծ Եղեռնին նուիրուած կոթողը եւ հրապարակն էլ անուանուեց Արմէնիա:

Յունիս 15

ԱՄՆ կոնգրէսմէն ճէյմզ Ռոկըն (Հանրապետական, Գալիֆ.) Ներկայացուցիչների Տան խօսնակ Տէնիս Հէսթըրթի հետ տեսակցելով, պահանջեց հայերի ցեղասպանութեան վերաբերող (H.Res.398) բանաձեւը անյապաղ դնել քուէարկութեան:

Յունիս 17

Ֆրանսիայի Մերակոյտի «Մեդիսիս» սրահում տեղի ունեցաւ Հայ-Թուրքական երկխօսութիւն Հայկական Հարցի եւ 1915թ. Մեծ Եղեռնի ճանաչման խնդրի շուրջ: Երկխօսութեան ընթացքում ելոյթ ունեցող Թուրք պատմաբանները պաշտպանում էին իրենց երկրի պաշտօնական տեսակէտը, որ երկկողմանի բախումներ են եղել եւ ոչ թէ՛ ցեղասպանութիւն:

Յունիս 18

Մօտ 10 Հազար Հայեր ցոյց կազմակերպեցին Փարիզում. Ֆրանսիայի Մերակոյտի շէնքի դիմաց, պահանջելով, որ այն ընդունի Հայոց Յեղասպանութեան բանաձևը:

Յունիս 25-26

Տաունիի (Գալիֆ.) Արուեստի թանգարանում բացուեց Մեծ Եղեռնին նուիրուած լուսանկարչական ցուցահանդէսը, «Վկաները» խորագրով: Այն մաս է կազմում Արա Օչականի եւ Լեւոն Փարեանի պատրաստած Հայոց Յեղասպանութեան ծրագրին:

Յունիս 28

ԱՄՆ-ի Կոնգրէսի Հայկական Հարցի Համախմբումիանդամ Կոնգրէսմէնների Տեո Վալինգթոնում Հանդիպման ընթացքում, ՀՀ նախագահը մատնանշեց Հայերի ցեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութիւնը:

Յուլիս 23

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցու բակում վեր խոյացաւ Մեծ Եղեռնի նահատակների յիշատակին նուիրուած «Ղօղանջ» խաչքար-յուշարձանը:

Յուլիս 26

Բրիտանա-Հայկական Համակուսակցական խորհրդարանական խմբի կողմից պատրաստուած Հայոց Յեղասպանութեան ճանաչման նամակ-դիմումը ներկայացուեց Մեծ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլերին: Այն ստորագրուած է 57 խորհրդարանականների կողմից (Լորտերի պալատ եւ Ուորհրդարան) եւ ըզմահազար քաղաքացիների կողմից:

Օգոստոս 5

Բրիտանական The Independent օրաթերթում լոյս տեսաւ Միջին Արեւելքի Հարցերի Թղթակից, Հրապարակախօս, պատմաբան՝ Ռապրթ Ֆիսքի ընդարձակ յօդուածը. «Կորսուած Հաշուեյարդար» (Տէտ Ռեքրէնիկ) խորագրով, ուր փաստերի լոյսի տակ հաս-

տատում է 1915թ. Հայոց Յեղասպանութիւնը:

Օգոստոս 10

Գալիֆօրնիոյ նահանգի ճերակոյտը միաձայն վաւերացրեց 1915 թիւը կրող բանաձևը, որը վերաբերում է Հայոց Յեղասպանութեան ղոհերի եւ նրանց ժառանգների ապահովագրական գանձումներին:

Օգոստոս 31

Անգլիայում Հրատարակուող The Independent օրաթերթը յատուկ Հրապարակումով Թուրքիայից պահանջեց ճանաչել 1915թ. Հայոց Յեղասպանութիւնը:

Սեպտեմբեր 2

Գերմանիայի Հայէ քաղաքի «Մարիցալըկ» թանգարանում բացուեց «Կիլիկիայի գանձերի» ցուցահանդէսը, ուր յատուկ տեղ էր տրուած Թուրքական Զարդերից ազատուած գանձերի ցուցադրութեանը:

Սեպտեմբեր 7

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանը ՄԱԿ-ի Հաղարամեակի գերաստիճանի ընդհանուր ժողովի իր ելոյթում, միջազգային համայնքի ուշադրութեանը ներկայացրեց Թուրքիայի կողմից 1915թ. Հայոց Յեղասպանութեան ուրացման հարցը:

Սեպտեմբեր 14

ԱՄՆ-ի Կոնգրէսի ներկայացուցիչների Պալատի Արտաքին Յարաբերութիւնների եւ Մարդկային Իրաւունքների Ենթայանձնախումբը քննարկեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման թիւ HR 398 բանաձևը:

Սեպտեմբեր 20

Սիտնիում տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան ռեկոնստրուկցիոն յուշարձանի բացումը: Հայահոծ ներկաների շարքում գտնուում էին նաեւ Օլիմպիական խաղերի Համար Աւստրալիա ժամանած Հայ մարզիկները:

Սեպտեմբեր 21

- ԱՄՆ-ի Կոնգրէսի ներկայացուցիչների Պալատի Արտաքին Յարաբերութիւնների եւ Մարդկային Իրաւունքների Ենթայանձնա-

խումբը բաց քուէարկութեամբ թեր քննարկեց հայերի ցեղասպանութեան HR 398 բանաձևին:

- Գալիֆ. նահանգի կառավարիչ Կրէյ Տէյվիսը ստորագրեց Հայոց Ցեղասպանութեան զոհերի ժառանգներին վնասի հատուցման համար իրաւունք տալ ապահովագրական ընկերութիւնների դէմ դատ բանալու: Այն օրէնքով, այն Հայոցդիները, որոնց նախնիները նախքան ցեղասպանութիւնը կեանքի ապահովագրութիւն ունէին ամերիկեան ընկերութիւններում, իրաւունք են ստանում համապատասխան հատուցում պահանջելու խնդրոյ առարկայ ընկերութիւններից:

Սեպտեմբեր 27-28

Վաշինգթոնում ԱՄՆ Կոնգրէսի գրադարանի Մեդիսընի անուան մասնաշէնքում, տեղի ունեցաւ «Հայոց Ցեղասպանութեան ամերիկեան արձագանգը» խորագրով համաժողով, որը նախաձեռնուել էր Կոնգրէսի գրադարանի եւ Հայկական Ազգային ինստիտուտի կողմից: Գրադարանի սրահում ցուցադրուեցին հայերի ցեղասպանութեան վերաբերող նկարներ եւ հրատարակութիւններ:

Հոկտեմբեր 3

ԱՄՆ-ի ներկայացուցիչների Տան Միջազգային Յարաբերութիւնների Յանձնախումբը 24 թեր, 11 դէմ եւ 2 ձեռնպահութեամբ վաւերացրեց Հայոց Ցեղասպանութեան բանաձևը:

Հոկտեմբեր 9

Երեւանեան լճի մօտակայքում, տեղի ունեցաւ արար ժողովուրդի հանդէպ Հայ ժողովուրդի երախտիքի յուշարձանի կառուցման համար մարմարէ հիմնաքարի բացումը: Այս խորհրդանշելու է եղեռնից վերապրողների երախտագիտական զգացումները արար ժողովուրդի նկատմամբ, որոնք կոտորածներից փրկեցին Հայ ժողովուրդի «մնացորդացը» եւ նրանց տուին բնակելի միջոցներ, աշխատանք, ապահովութիւն եւ ապա՝ քաղաքական լիարժէք իրաւունքներ:

Հոկտեմբեր 18

Ուրուգուայի Արեւելեան Հանրապետութեան Սենատը միաձայն կրկին ընդունեց օրինագիծ, ըստ որի «Ապրիլ 24-ը յայտարարուում է 1915թ. Հայոց Ցեղասպանութեան նահատակների յիշատակութեան օր»: Ուրուգուայը աշխարհում առաջին երկիրն է, որ 1965թ.-ին, Ապրիլի 24-ը յայտարարեց Հայ նահատակների Ոգեկոչման օր:

Հոկտեմբեր 19

ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի յատուկ նամակով, Հայոց Ցեղասպանութեան վերաբերող թիւ 596 բանաձևի քուէարկութեան հարցը, խօսնակ Հեսթըրթի կողմից հանուեց ներկայացուցիչների Տան լիազումար նիստի օրակարգից: (Նախկինում այն կրում էր 398 թիւը):

Հոկտեմբեր 20-21

Լոս Անճելըսի UCLA համալսարանում «Պատմական Հայաստանի քաղաքներն ու նահանգները» խորագրի տակ տեղի ունեցաւ միջազգային 7-րդ գիտաժողովը, որը նուիրուած էր «Հայկական Կիլիկիա»-ին: Բացումը կատարուեց Արամ Ա. Կաթողիկոսի կողմից:

Հոկտեմբեր 26

ՀՅԴ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութիւնը երեւանում բողոքի երթ կազմակերպեց դէպի ԱՄՆ-ի դեսպանատուն: Այն ուղղուած էր Հոկտեմբեր 19-ին Հայոց Ցեղասպանութեան ամսին բանաձևի քննարկումը Կոնգրէսի օրակարգից հանելու դէմ:

Նոյեմբեր 2

Վենեզուէլայի մայրաքաղաք Գարադասի կարեւոր հրապարակներից մէկում, տեղի ունեցաւ 1915թ. Հայոց Ցեղասպանութեան յուշարձանի հիմնարկէքի հանդիսաւոր արարողութիւնը:

Նոյեմբեր 4

Թորոնթոյի Ռայըըսըն համալսարանի մեծ դահլիճում առաջին անգամ տեղի ունեցաւ Գանատացի արուեստագէտ Դէյվիտ Վոլտընի

Հեղինակած 20-րդ դարի ցեղասպանութիւններին նուիրուած Հոգեհանգստեան պատարագ-Համերգը: Դ. Վոլտընը այն յօրինել է 20-րդ դարի սկզբում տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան փաստերի ազդեցութեան տակ:

Նոյեմբեր 8

Փրանսիայի Նորհրդարանի Սենատը ձայների մեծամասնութեամբ՝ 164 կողմ, 40 դէմ եւ 4 ձեռնպահ, ընդունեց օրէնք, որ Հրապարակայնօրէն ճանաչում է 1915 թուականի Հայոց Յեղասպանութիւնը:

Նոյեմբեր 10

Յովհաննէս Պօղոս Բ. Պապը եւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը համատեղ հաղորդագրութեամբ դատապարտեցին 20-րդ դարի սկզբին Հայոց Յեղասպանութիւնը:

Նոյեմբեր 15

Սթրասբուրգում տեղի ունեցաւ Եւրոխորհրդարանի լիագումար նիստ, ուր Թուրքիայի կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը քննարկուելուց յետոյ, 234 թեր եւ 213 դէմ ձայների յարաբերութեամբ ընդունուեց բանաձեւ, ուր Թուրքիայի իշխանութիւններից պահանջուեց ճանաչել նախքան Թուրքիայի Հանրապետութեան Հիմնադրումը տեղի ունեցած Հայոց Յեղասպանութեան փաստը եւ մեծացնել աջակցութիւնը Թուրքիայի Հայ Համայնքին:

Նոյեմբեր 17

Իտալիայի Նորհրդարանը ճանաչեց 1915-1923թթ. Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում: Միեւնոյն ժամանակ, Թուրքիայի կառավարութեան եւ Ազգային Մեծ Ժողովի ուշադրութեանն հրաւիրեց, որ առաւել Հոգ տարուի Թուրքիայի Հայ փոքրամասնութեանը:

Դեկտեմբեր 6

Իսրայէլի Արտաքին գործոց նախարարի տեղակալ, Քէնեսեթի անդամ Նվաֆ Մասալլահը երեւան այցելութեան ընթացքում, ծաղկեպսակ

դրեց 1915-1923թթ. Օսմանեան Թուրքիայում իրականացուած Հայոց Յեղասպանութեան զոհերի յուշարձանին:

2001թ.

Յունուար 10

Փրանսիայի Նորհրդարանի Ստորին Պալատի Արտաքին Յարաբերութիւնների Յանձնաժողովը հաստատեց Օսմանեան Կայսրութիւնում իրականացուած Հայոց Յեղասպանութեան մասին օրէնքի նախագիծը:

Յունուար 18

Փրանսիայի Նորհրդարանը միաձայն ճանաչեց եւ օրէնքի ուժ տուեց 2000թ. Նոյեմբեր 18-ին ընդունուած 1915թ. Հայոց Յեղանպանութեան վերաբերող բանաձեւին: Այսպիսով, Փրանսիան դարձաւ առաջին երկիրը, որ ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ օրէնք ընդունեց:

Յունուար 25

Մեծ Բրիտանիայի Նորհրդարանի Լորդերի պալատում 8 ընդհանուց ելոյթ ունեցաւ Բարոնուհի Քերոլայն Քոքսը, որն ամբողջովին նուիրուած էր Հայոց Յեղասպանութեան:

Յունուար 30

Փրանսիայի նախագահ Ժակ Շիրաքը եւ վարչապետ Լէոնէլ Ժոսփէն վաւերացրին Նորհրդարանի եւ Մերակոյտի կողմից որդեգրուած Հայոց Յեղասպանութեան բանաձեւը: Նոյն օրը, Փարիզի քաղաքապետարանը որոշեց Հայոց Յեղասպանութեան նուիրուած մի յուշարձան կազնեցնել Գանատա Հրապարակին վրայ:

Փետրուար 7

Ռուսաստանի Տումայի պատգամաւոր՝ Ալեքսէյ Միթրոֆանովը մի օրինագիծ ներկայացրեց քննարկման, ուր առաջարկուեց Հայոց Յեղասպանութեան զոհերին վնասուց հատուցում տալու համար ստեղծել միջազգային յանձնաժողով:

Փետրուար 21-22

Երեսնուամյա տեղի ունեցաւ Ուղղափառ ժողովուրդների միջազգային հիմնարկի խորհրդաժողովը: Ընդունուած բանաձեւում դատապարտուեց նաեւ 1915-ի Հայոց Յեղասպանութիւնը:

Մարտ 3

Ֆրանսիայի Սեւր քաղաքում, ճիշդ այն շէնքի դիմաց, ուր 83 տարի առաջ ստորագրուեց Սեւրի դաշնագիրը, գետեղուեց եւ բացուեց կատարուեց խաչքար-յուշարձանի՝ ի յիշատակ Հայոց Յեղասպանութեան զոհերի եւ յանուն Ֆրանսիայի ընկած մարտիկների:

Մարտ 10

ԱՄՆ-ի Նիւ Մեքսիքոյի նահանգային օրէնսդիր խորհուրդը ձայների մեծամասնութեամբ վաւերացրեց «Ապրիլ 24-ը որպէս Հայոց Յեղասպանութեան յիշատակի օր» թիւ 34 բանաձեւը:

Մարտ 13

Զուիցերիայի խորհրդարանը 70-ի դէմ 73 ձայնով մերժեց ճանաչել Ընկերվարական երեսփոխան ժողէֆ Զիսեստիսի շնորհիւ Յեղասպանութեան վերաբերող բանաձեւը:

Մարտ 22

Գալիֆորնիոյ ծերակոյտը միաձայն ընդունեց «Հայոց Յեղասպանութեան յիշատակումի օրուայ» SJR-5 բանաձեւը: Այս բանաձեւով ԱՄՆ Կոնգրէսից պահանջուեց նաեւ ճանաչել Հայոց Յեղասպանութիւնը:

Մարտ 26

ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի ծերակոյտը 34 թեր եւ 10 դէմ ձայներով, ընդունեց Ապրիլ 24-ը Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակի օր ճանաչելու բանաձեւը:

Մարտ 27

ԱՄՆ-ի Արքանսաս նահանգի կառավարիչը յատուկ հռչակագրով նահանգից ներս Ապրիլ 24-ը յայտարարեց Հայոց Յեղասպանութեան ոգեկոչումի օր:

Մարտ 29

Գանատայի Քէպէքի Սէն Լորան շրջանի ծերակուտական Շըրլի Մաճօ Մերակոյտի Հերթական նիստին ներկայացրեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման մի բանաձեւ:

Նոր Հայաստան օրաթերթ

ՈՒՐԱԹ, ԱՊՐԻԼ 20, 2001, Ժ. ՏԱՐԻ, ԹԻՒ 73

ՆՈՐ ԿԵԱՆՔ, ԻԳ. ՏԱՐԻ, ԹԻՒ 18, ԱՊՐԻԼ 19, 2001



ՀՀ ԳԱ Արևելագիտութեան սեկտորի մի խումբը աշխատակիցներ , 1962 թ. Աբովյան փողոցի վրա զանվող շէնքի առաջ: Կենտրոնում Հնդկաստանից ժամանած արևելագետ պատմաբանն է:

ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ

Այս տարի Օգոստոս 27-ից Սեպտեմբեր 2-ը Մոնթրեալում տեղի ունեցաւ արեւելագէտների 36-րդ համաշխարհային գիտաժողովը, որին մասնակցեց եւ «Անդրկովկասեան-Մերձաւոր արեւելեան աշխարհաբաղաբական տարածաշրջանի կազմաւորումը» խորագրով էլոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի տնօրէն՝ Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը:

Այս գիտաժողովի վերջում տեղի ունեցաւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքոյ գործող արեւելագիտական եւ ասիական ուսումնասիրութիւնների միջազգային միութեան նախագահութեան նիստը, ուր մանրամասն ծանօթեցան Միութեան Արեւելագիտութեան Ինստիտուտի կատարած բեղուն աշխատանքներին, Միութեան գլխաւոր քարտուղար՝ Նուբարացի յայտնի թուրքագէտ Հազայի առաջարկութեամբ Արեւելագիտութեան Ինստիտուտը միաձայն դարձաւ այդ Միութեան անդամ:

Ի պատիւ հայ արեւելագէտների պէտք է նշել, որ Հայաստանը Ռուսաստանից յետոյ ԱՊՀ երկրորդ երկիրն է, որ ներկայացուցեց միջազգային այս գիտական կենտրոնում:

Ըստ Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանի տեղեկատուութեան այս հեղինակաւոր Միութեան անդամ դառնալով «Հայաստանը այսուհետ հնարաւորութիւն է ստանում համագործակցելու ԵՈՒՆԵՍԿՕ-ի հետ, ինչպէս նաեւ մասնակցելու արեւելագիտութեան բնագաւառում քաղա-

քականութեան մշակմանը՝ ընդլայնելով համագործակցութեան դաշտը»:

Այս ուրախ իրադարձութիւնից կարճ ժամանակ անց, Հոկտեմբերի սկզբին Արեւելագիտութեան Ինստիտուտը համագործակցութեան պայմանագիր ստորագրեց Գամակոսի արաբական ուսումնասիրութիւնների Ֆրանսիական Ինստիտուտի հետ: Բնականաբար Ինստիտուտը մինչ այդ գիտական կապեր ունեցել է արտասահմանեան նմանատիպ կենտրոնների հետ, սակայն դրանք կրել են տարբերային բնույթ: Այդ տեսակէտից սա առաջին գործնական եւ փոխշահաւէտ պայմանագիրն է, որ Արեւելագիտութեան Ինստիտուտը ստորագրեց արտասահմանեան շատ կարեւոր մի կենտրոնի հետ, ուր կան արխիւային հարուստ նիւթեր հայ ժողովրդի պատմութեան վերաբերեալ:

Այստեղ հարց է առաջանում, ինստիտուտը արդեօ՞ք պիտի կարողանայ այսօրուայ դժուարին պայմաններում պահպանել հայ արեւելագէտների աւանդական գիտական բարձր մակարդակը միջազգային արեւելագիտական հեղինակաւոր շրջաններում: Այո պիտի կարողանայ, որովհետեւ ինչպէս նախկինում, այնպէս էլ այսօր Ինստիտուտի տնօրինութիւնը յատուկ ուշադրութիւն է դարձնում երիտասարդ կազմերի պատրաստման խիստ կարեւոր գործին:

Այս առիթով գոհունակութեամբ պիտի նշեմ, որ օրերս Երեւանում լոյս տեսաւ Արեւելագիտութեան Ինստիտուտի «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ»

մատենաշարի 19-րդ հատորը: Այս հատորը իր բնույթով եւ առանձնահատկութեամբ տարբերում է նախկին հրատարակութիւններից նրանով, որ այստեղ ամբողջապէս ընդգրկուած են այս տարուայ Յունիսին Արեւելագիտութեան Ինստիտուտում կայացած երիտասարդ արեւելագէտների հանրապետական 21-րդ գիտական նստաշրջանին ներկայացուած 36 զեկուցումները, որոնք նուիրուած են Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրների եւ ժողովուրդների պատմութեան, լեզուի, գրականութեան եւ կրօնի արդիական խնդիրներին՝ հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը:

Բարձր գնահատելով երիտասարդ գիտաշխատողների ուսումնասիրութիւնները, այս հատորի առաջաբանում Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեանը նշում է հետեւեալը. «Յօդաածների հեղինակները համարձակօրէն ոտք են դրել արեւելագիտութեան դժուարին, սակայն խիստ պատուաւոր բնագաւառը: Նրանք իրենց հետ բերել են մտածելակերպի թարմութիւն, երեւոյթները նորովի լուսաբանելու գովելի միտում, լաւատեղեակութիւն աղբիւրներին եւ մասնագիտական գրականութեանը, այդ թւում՝ արեւելեան եւ արեւմտեան լեզուներով, բանավիճելու եւ իրենց տեսակէտ-հիմնաւորելու անուրանալի ձիրք: ...Գիտութեան բնագաւառ է մուտք գործում արեւելագիտութեան մի նոր կրթութեւ սերունդ, որն յառաջիկայում, առնուազն 21-րդ դարի առաջին կէսում իր ուսերի վրայ է կրելու արեւելագիտութեան ծանր բեռը»:

Բնականաբար Ինստիտուտի այս բոլոր յաջողութիւններում իր անշա-

հանդիր ներդրումն ունի «Արմէն եւ Բերսաբէ Ճերեճեան հիմնադրամը»: Յատկապէս նրա նախագահ՝ մեծարգոյ Արսէն Ճերեճեանը: Այդ նա է, որ հայրենասիրական մեծ նուիրումով ստանձնել է Արեւելագիտութեան Ինստիտուտի գիտական աշխատութիւնների հրատարակման եւ երիտասարդ գիտնականների նիւթական խրախուսման հովանաւորութիւնը:

ՆՈՐ ՕՐ SATURDAY, DECEMBER 16, 2000

ՄԵՐՉԱՎՈՐԵԿ ՄԻՋԻՆ
ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐ
ԵՎ
ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ
XIX

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

THE COUNTRIES AND PEOPLES
OF THE NEAR AND MIDDLE EAST

XIX

This publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. - USA

YEREVAN - 2000

Հատորին շապիկը

Հայոց Յեղասպանության հանաչման և դատապարտման ժամանակագրություն

Ստորև բերված Հայոց Յեղասպանության հանաչման և դատապարտման «ժամանակագրությունը» սկսվում է 1965 թվականից:

Իրականում, դեռևս Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում և հետագայում, տարբեր ազգությունների պատմաբաններ, գիտնականներ, հրապարակախոսներ, լրագրողներ, ինչպես նաև պետական գործիչներ, իրենց ելույթներում, հոդվածներում և աշխատություններում ցատուժով դատապարտել են արևմտահայերի զանգվածային բռնի տեղահանություններն ու կոտորածները ամբողջ Օսմանյան կայսրությունում:

1915թ. մայիսի 24-ին, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները Բարձրագույն Դռան ներկայացված հուշագրում, խրատագույն դատապարտելով երիտթուրքերի գործադրած բարբարոսային ցեղասպանության քաղաքականությունը հայերի նկատմամբ, հայտարարել են հետևյալը.

«... Մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի կատարած այս նոր հանցագործությունները նկատի ունենալով, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարությունները այսու հրապարակավ հայտարարում են Բարձրագույն Դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական այն իշխանությունների վրա, ովքեր մասնակից են դարձել նրան կոտորածին» (Տե՛ս Յուրի Բարսեղով, Հայերի ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործություն է, «Լրաբեր Հասարակական Գիտությունների, Երևան, 1987, թիվ 4, էջ 34, ռուսերեն):

Պատերազմի ավարտից հետո համաշխարհային հասարակայնությունը, առաջադեմ մտավորականությունը պահանջեց պատասխանատվության ենթարկել և դատապարտել արևմտահայության սպանող կազմակերպող թուրք ռեզազորներին:

Եվ, ահա 1919 թվականի մարտի 8-ին, սուլթան Մեհմետ 6-րդ Վահիդեդդինի հատուկ հրամանագրով, երիտթուրքական կուսակցության պարագլուխներն ու նախարարները հանձնվեցին Կ. Պոլսի ռազմական արտակարգ ատյանի քննության:

Երիտթուրքերի դատավարությունում բերված մեղադրական փաստաթղթերը անհերքելիորեն ապացուցեցին, որ հայերի բռնի տեղահանությունն ու կոտորածները տեղի են ունեցել «Իթթիհատ վեթբաքքի կուսակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ, հատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով: Եվ ինչպես հայտնի

է 1919թ. հուլիսի 5-ին արձակված դատավճռով դատարանը մահվան վճիռ կայացրեց հայերի ցեղասպանությունը կազմակերպող՝ երիտթուրքական կուսակցության և կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին:

Ճիշտ է՝ այս որոշումները սպասված արդյունքը չտվեցին, այնուհանդերձ պատերազմի ավարտից հետո երիտթուրքերի պարագլուխների դատավարությունը խոշոր երևույթ էր արևմտահայության նկատմամբ տեղի ունեցած հալածանքներն ու ցեղասպանությունը համայն մարդկության առաջ բացահայտելու տեսանկյունից:

Հետագայում աստիճանաբար լուրջան մատնվեց միջազգային չափանիշով հայերի ցեղասպանության դատապարտման հարցը: Միայն մեծ եղեռնի 50-րդ տարելիցի օրերին Երևանում, հայ ժողովուրդը միասնաբար բարձրացրեց իր բուն բողոքը, սթափեցնելով աշխարհի ժողովուրդներին, որ դարասկզբի հայերի ցեղասպանությունը չի մոռացվել, այն կա, եղել է և ապրում է նոր սերունդի սրտերում:

Թե հետագայում Հայերի ցեղասպանության հանաչման և դատապարտման խնդրում ինչպիսի՞ հզոր ալիք բարձրացավ, տե՛ս ստորև բերված ժամանակագրությունը:

1965թ.:

Ապրիլ 20 - Ուրուգվայի Արևելյան Հանրապետության Մերակույտի և Ներկայացուցիչների Պալատի միացյալ ժողովում ընդունվեց օրենք հայ նահատակների հիշատակի օրվա առթիվ:

Հուլիս 15 - Հելսինկիում կայացած խաղաղության կողմնակիցների համաշխարհային վեհաժողովը դատապարտեց Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած 1915-ի ցեղասպանությունը:

1974թ.

Մարտ 6 - ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Հանձնաժողովը քննարկումների ընթացքում 1915-ի Մեծ եղեռնը բնութագրեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն:

1975թ.

Ապրիլ 8 - ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների Պալատի ընդունած բանաձևում ճանաչվեց հայերի ցեղասպանությունը:

1984թ.

Ապրիլ 13-16, Փարիզում «Ժողովուրդների Միջազգային Ատյան»-ի գումարած նիստերում դատապարտվեց հայերի ցեղասպանությունը և այն բնութագրվեց որպես միջազգային չափանիշի հանցագործություն: 1985թ.

Օգոստոս 27 - ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Ենթահանձնաժողովը (ժնկում) 1915-1917թթ. Թուրքիայում տեղի ունեցած հայերի չարդերը որակեց որպես ցեղասպանություն:

1987թ.

Հունիս 18 - Ֆրանսիայի Ստրազբուրգ քաղաքում եվրոպական Խորհրդի ընդունած որոշման մեջ դատապարտվեց հայերի ցեղասպանությունը:

1988թ.

Նոյեմբեր 22 - Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդը ընդունեց օրենք «Օսմանյան Թուրքիայում 1915-ի հայերի ցեղասպանության դատապարտման մասին»:

1990թ.

Ապրիլ 19 - Կիպրոսի Խորհրդարանը դատապարտեց հայերի ցեղասպանությունը և Ապրիլ 24-ը հռչակեց Հայերի Ցեղասպանության Հիշատակի Օր:

1994թ.

Ապրիլ 22 - Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման, քննարկելով 1915-ի հայերի ցեղասպանության հարցը, իր հայտարարության մեջ դատապարտեց Օսմանյան կայսրությունում բուրքական կանավարության կողմից գործադրված ցեղասպանությունը և իր կարեկցանքն հայտնեց հայ ժողովրդին:

1995թ.

Ապրիլ 14 - Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման պաշտոնապես դատապարտեց 1915-1922թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին և ապրիլի 24-ը հայտարարեց որպես Հայերի Ցեղասպանության Հիշատակի Օր:

1996թ.

Ապրիլ 23 - Կանադայի Խորհրդարանը, մեկուկես միլիոն զոն խլած 1915թ. ապրիլ 24-ի ցեղասպանության 81-րդ տարելիցի առիթով և ի հիշատակ մարդկության դեմ կատարված ոճիտների՝ յուրաքանչյուր տարվա ապրիլ 20-27-ը հռչակեց մարդկության դեմ գործված ոճիտի հիշատակի շաբաթ:

Ապրիլ 23-ը, հայերի ցեղասպանությունը ճանաչվեց ԱՄՆ-ի Վիրջինյա, Իլլինոյ և Հյուսիսային Կարոլինա Նահանգների Խորհրդարաններում:

Ապրիլ 25 - Հունաստանի Խորհրդարանը պաշտոնապես ճանաչեց հայերի ցեղասպանությունը, «1915 ապրիլ 24-ը ընդունելով Թուրքիայի կողմից ցեղասպանության ենթարկված հայերի հիշատակի օր»:

1997թ.

Ապրիլ 3 - Լիբանանի Հանրապետության Խորհրդարանը բանաձև ընդունեց, ապրիլ 24-ը հռչակելով հայ ժողովրդի դեմ գործադրված կոտորածների հիշատակի օր:

Ապրիլ 21 - Կալիֆորնիայի Նահանգային Խորհրդարանը բանաձև ընդունեց ապրիլ 24-ը ճանաչելով «Հայերի ցեղասպանության ոգեկոչման օր»:

Ապրիլ 24 - Ավստրալիայի Նյու Սաութ Վելս հայաշատ ամենամեծ Նահանգի Խորհրդարանը հատուկ բանաձևով դատապարտեց 1915թ. հայերի ցեղասպանությունը:

1998թ.

Մարտ 27 - Բելգիայի ժերակույտը ձայների մեծամասնությամբ բանաձև ընդունեց, որ ճանաչելով հայերի ցեղասպանությունը կոչ է անում Թուրքիային, որպեսզի ընդունի Օսմանյան կայսրության վերջին կառավարության կողմից գործադրված հայերի ցեղասպանության փաստը:

Մարտ 30 - Վենետիկի քաղաքային Խորհուրդը միաձայն դատապարտեց և բանաձև ընդունեց 1915թ. հայերի ցեղասպանության մասին:

Ապրիլ 23 - Արգենտինայի Սենատը բանաձև ընդունեց, դատապարտելով բոլոր տեսակի ցեղասպանություններն ու ոչնչացումները: Բանաձևի նախաբանում վկայակոչվում է 1915թ. ապրիլի 24-ին սկսված ցեղասպանությունը՝ այն հռչակելով որպես «Թուրքիայի կողմից իրականացված 20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:

Ապրիլ 24 - Նյու Յորքի Նահանգային Խորհրդարանը ճանաչելով հայերի ցեղասպանությունը, Ապրիլ 24-ը հայտարարեց «Հայ նահատակների հիշատակման օր»:

Մայիս 29-ը - Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովը ճանաչեց հայերի ցեղասպանությունը:

1999թ.

Փետրվար 17 - Ջորջիա (ԱՄՆ) Նահանգի Մերակույտը բանաձև ընդունեց Ապրիլ 24-ը հռչակելով հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

Ապրիլ 14 - ԱՄՆ-ի Հարավային Կարոլինա Նահանգի Խորհրդարանը, ճանաչելով հայերի ցեղասպանությունը, Ապրիլ 24-ը հայտարարեց «Հայ նահատակների հիշատակման օր»:

2000թ.

Մարտ 6 - Հոմի Գաղաքային Խորհուրդը միաձայն որոշում ընդունեց 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին: տարբեր ժամանակներում համանման որոշում են ընդունել նաև իտալական այլ 12 քաղաքապետարաններ: Այդ քաղաքներն են՝ Բանիոկավալլո, Լուկո, Ֆուլինիանո, Ա. Ակաթա Սուլ, Սան Թերնո, Կոդիբիոլա, Սուարոնո, Ռուսի, Կոնսելիչե, Կամբոնոկարն, Փադովա, Միլան:

Մարտ 29 - Շվեդիայի Խորհրդարանը ճանաչեց և վավերացրեց Հայերի ցեղասպանության բանաձևը:

Ապրիլ 18 - ԱՄՆ-ի Փենսիլվանիա Նահանգի Խորհրդարանը. Ապրիլ 24-ը միաձայն հռչակեց Հայերի ցեղասպանության նահատակների ոգեկոչման օր:

Մայիս 2 - ԱՄՆ-ի Վիսքոնսին Նահանգի Խորհրդարանը, ճանաչելով Հայերի ցեղասպանությունը, Ապրիլ 24-ը նահանգի տարածքում հայտարարեց հայ նահատակների հիշատակի օր:

Մայիս 11 - Լիբանանի Խորհրդարանը միաձայն որդեգրեց հայերի ցեղասպանության ճանաչման հետևյալ բանաձևը:

«Օսմանյան իշխանությունների կողմից 1915-ին գործադրված ջարդերի 85-րդ տարելիցի առիթով, ջարդեր՝ որոնց զոհ գնացին մեկուկես միլիոն հայեր, Լիբանանի Խորհրդարանը ճանաչում և դատապարտում է հայ ժողովրդի դեմ գործադրված ցեղասպանությունը և ամբողջական զոհակցությունն է հայտնում հայ քաղաքացիների պահանջներին, նկատելով, որ այս ցեղասպանության միջազգային ճանաչումը նախապայման է ապագայի հավանական նմանօրինակ ոճիրների կանխարգելմանը»:

Հոկտեմբեր 18 - Ուրուկուէյի Արեւելեան Հանսպետութեան Մերակոյտը միաձայն կրկին ընունեց օրինագիծ, ըստ որի «Ապրիլի 24-ը յայտարարում է 1915 թ. հայերի ցեղասպանութեան սխտակների յիշատակութեան օր»:

Նոյեմբեր 8 - Ֆրանսիայի Խորհրդարանի Մեակոյտը ձայների մեծամասնութեամբ՝ 164 կողմ, դէմ եւ 4 ձեռնպահ, ընդունեց օրէնք, որ հրաարակայնօրէն ճանաչում է 1915 թուականի հայերի ցեղասպանութիւնը:

Նոյեմբեր 17 - Իտալիայի Խորհրդարանը ճանչեց 1915-1923 թթ. հայերի ցեղասպանութիւնը ամանեան կայսրութիւնում: Միւլենոյն ժամանակ ուրբիայի կառավարութեան եւ Ազգային մեծ ղովի ուշադրութեանն հրաւիրեց, որ ալ աւելի ք տարուի Թուրքիայի հայ փոքրամասնութեանը:

2001 թ.

Յունուար 18 - Ֆրանսիայի Խորհրդարանը միայն ճանաչեց եւ օրէնքի ուժ տուեց 2000 թ. Նոմբեր 8-ին ընդունուած 1915 թ. հայերի ցեղասպանութեան վերաբերող բանաձևը: Այդպիսով րանսիան դարձաւ առաջին երկիրը, որ ցեղասպա-

«Կարոս», հունիս 15, 2000

Ուղերձ Պրոֆ. Ավետիս Փափագյանի հատորների շնորհանդեսին

Հունիսի 2-ին Իրանահայ Միության սրահում, Գրականության և Արվեստի բաժանմունքի կազմակերպությամբ տեղի ունեցավ պրոֆ. Ավետիս Փափագյանի «Ցեղասպանություն և Գոյատևման պայքար», «Հայկական Հարցը և Մեծ եղեռնը» (Ժամանակագրություն, 1876-2000թ.) նորատիպ գրքերի շնորհանդեսը:

Գլխավոր բանախոսն էր դոկտ. պրոֆ. Գևորգ Խրյուպյանը: Ողջունյի խոսքով հանդես եկան՝ գրող-մտավորական Ստեփան Ալաշաջյանը և դոկտ. պրոֆ. Ալիշան Բայրամյանը:

Գեղարվեստական բաժնում ելույթ ունեցավ օպերային մեներգչուհի Ռուզան Բարխուդարյանը, ընկերակցությամբ երաժշտագետ պրոֆ. Լևոն Աբրահամյանի:

Շնորհանդեսի հայտագիրը հմտորեն վարեց Գրականության և Արվեստի բաժանմունքի վարչության նախագահ՝ Անահիտ Նազարյանը:

Այնուհետև տեղի ունեցավ գինեձոնի ավանդական արարողությունը:

Մույն շնորհանդեսի հասցեով ուղարկված Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն՝ դոկտ. պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի շնորհավորական ուղերձը, ինչ-որ թյուրիմացության պատճառով ժամանակին տեղ չէր հասել:

Ուստի, ստորև ընթերցողին ենք ներկայացնում այդ ուղերձի բովանդակությունը:

ԽՄԲ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

24G Marshal Baghramian Ave.
Yerevan 375019 Armenia
Tel. 58.33.83
E-mail: armarov@pnaas.sci.am
Fax: (374) 2-50-50-75

375019, Երևան-19
Մարշալ Բաղրամյան պող. 24գ.
Հեռ.՝ 58.33.83
Էլ. փոստ.՝ armarov@pnaas.sci.am
Տաքս.՝ (374) 2-50-50-75

« 2471 - 21 »

« 31 » մայիսի 2000թ.

Պրոֆեսոր Ավետիս Փափազյանին
և նրա գրքերի շնորհահանդեսի բոլոր մասնակիցներին

Հարգելի և սիրելի Ավետիս:

Շնորհահանդեսի հարգելի մասնակիցներ

Ես մեծ հաճույքով և ուրախությամբ իմ և Հայաստանում գտնվող բոլոր արևելագետների, քո բոլոր գործընկերների շնորհավորանքներն են միացնում այսօր քո գույգ աշխատությունների՝ «Ցեղասպանություն և գոյատևման պայքար», «Ժամանակագրություն. Հայկական հարցը և մեծ եղեռնը 1876-2000», շնորհահանդեսի մասնակիցների շնորհակալական խոսքերին: Դու քո գիտական արժեքավոր վաստակով միանգամայն արժանի ես մնամ մեծարման:

Սիրելի Ավետիս, հարգելի եղբայր և գործընկեր.

Դու այն քերթից ես, որ Հայրենիքից տեղափոխվելով, ինչպես հիմա են ասում, արտերկիր, չգորացրվեցիր և քո կարգավիճակի մեջ փոփոխություն տեղի չունեցավ: Այստեղ էլ էիր պրոֆեսիոնալ քուրթագետ, այդտեղ էլ ես պրոֆեսիոնալ քուրթագետ:

Դա ինչ-որ չափով, լինենք անկեղծ, քուլացնում է հեռացման, իսկ եթե ճիշտն ուզում ես իմանալ, կորստի ցավը:

Բայց մենք այստեղ հիացնումքով ենք հետևում քո ակտիվ գիտական գործունեությանը: Դրա վկաներն են քո երկու այս աշխատությունները, որ մենք բարձր ենք գնահատում: Դրանք ծանրակշիռ ներդրում են հայ ցեղասպանության բնագավառում: Հավատա ինձ, որ սրանք հավուր պատշաճի ասված խոսքեր չեն: Այլապես ես երբեք չէի համաձայնվի, դու հո գիտես իմ բնավորությունը, որ գիտական շրջաններում ամենաբարձր հեղինակություն՝ վայելող Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի մակնիշը (գրիֆը) դրվեր այդ հրատարակությունների վրա:

Սիրելի Ավետիս, վայելիր քո արդար գիտական վաստակի ճանաչման հաճույքը: Շարունակիր քո օգտակար և դրվատանքի արժանի գործունեությունը: Եվ չհամարձակվես գորացրվել: Ընդունիր այս բոլորը որպես քո գործընկերների, որոնք հիշում և սիրում են քեզ, պատգամ:

Ամուր սեղմում եմ ձեռքը:

Նիկոլայ Հովհաննիսյան
պատմ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

«ՓԱՐՈՍ», ՕԳՈՍՏՈՍ 1, 2000

Մեծ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԴՈՒՍ. ՌՈՊԵՐՏ ԳԵՊԵՃԵԱՆԻ

ՄԻ ՆԱՄԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Խոր վշտով տեղեկացանք, որ 26 Մարտ 2001 թռականին Հալչպում իր մահկանացուն կնքեց հանրայայտ ակնաբուժ-բժշկապետ, ազգային-հասարակական անխոնջ գործիչ եւ մեծ բարերար՝ Տոքթ. Ռուպերտ Ճեպեճեանը: Մեզանից ընդմիշտ հեռացաւ իր հայրենիքի եւ ժողովրդի բարօրութեանն ու բարգաւաճմանը նուիրուած մի ազնուագոյն, վեհ անձնաւորութիւն:

Տոքթ. Ռուպերտ Ճեպեճեանը ամէն անգամ Երեւան իր այցելութեան ընթացքում, անպայման պիտի հանդիպէր Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտ, մօտից ծանօթանալու ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներին եւ վերջին նորոյթներին: Այլ բարերարների նման տեսապէս ձգտում էր օգտակար դառնալ ինստիտուտի կարիքներին:

Եւ ահա 1985 թ. սկզբներին կրկին հանդիպեցինք ինստիտուտում: Տոքթ. Ճեպեճեանը բուռն ցանկութիւն յայտնեց արաբերէն թարգմանել եւ հրատարակել այդ օրերին հայերէն լոյս տեսած իմ «Հայերի Ցեղասպանութիւնը Ըստ Երիտթուրքների Դատավարութեան Փաստաթղթերի» խորագրով գիրքը:

Արեւելագիտութեան ինստիտուտի տնօրինութիւնը, եւ ես որպէս հեղինակ, սիրով համաձայնեցինք:

Այսօրուայ պէս ականջիս հնչում է նրա հետեւեալ խօսքերը: «Մենք այս գիրքը պիտի թարգմանենք եւ հրատարակենք մէկ նպատակի համար: Այն ցրիաբար բաժանելու բոլոր արաբ մտաւորականներին, որպէսզի կատարեալ պատկերացում ունենան 1915 թ. հայոց ծանրագոյն ողբերգութեան մասին»:

Տոքթ. Ճեպեճեանը իր խոստումը կատարեց եւ գիրքը լոյս տեսաւ արաբերէն 1992 թ. Հալչպում Դուկա Ալեքսան Բէշչիլեանի թարգմանութեամբ:

Լուսահոգի Տոքթ. Ճեպեճեանը իր յաջորդ այցելութեան ընթացքում նոյնիսկ յանձն առնելով նիւթական ծախսերը, բուռն ցանկութիւն յայտնեց,

որ եւ այցելեմ Հալէպ, որպէսզի ուսումնասիրեմ իր գրադարանում պահուող օսմաներէն (արաբատառ թուրքերէն) գրքերը: Ցաւօք այն չէրականացաւ իմ Լոս Անճելըս գալու պատճառով:

«Մարդը գնաց, բայց նրա բարի յիշատակը մնաց» նշանաբանի տակ, ստորեւ ընթերցողի ուշադրութեանն եմ ներկայացնում իր ժամանակին ինձ հասցէագրուած նրա մէկ նամակի պատճէնը, անհրաժեշտ ծանօթագրութիւններով:

Յարգելի Դոկտ. Աւետիս Փափագեան,
Ռիֆաթ Պէյ Մեմլեանգատէի մասին Սարգիս Չափարեան ձեզի պիտի յանձնէ երկու հետաքրքրական գրութիւններ:

Պատրաստելու վրայ եմ աշխատամբ մը ինքս ալ, որուն մէջ նորութիւններ պիտի գտնէի: Շուտով կ'ուղարկեմ, նոր մէկ նկարը չորս ուրիշ երեւելիներու հետ 1908 Յունուար ք-¹

Նախապէս գրած մէկ նամակս գուցէ ստացած կ'ըլլաք:²

Նամակաբերս արեւելագետներու գրադարանին յանձնելու է արաբատառ օսմաներէն թերթերու լիակատար ցանկի մէկ լուսապատնէնը, Դոկտ. Դալլաֆեանի ձեռամբ:³

Շատ ցանկալի է որ կարենայիք Հալէպ այցելել եւ վերանայիլ մեր Օսմանեան արխիւները: Գուցէ հետաքրքրական նիւթեր գտնէի պատմութեան համար: Կրնայի՞նք ձեզի օքեւանալ նախօրոք համաձայնութեամբ:⁴

Պէտք է Ձատոյեանին դիմէի այդ քանի համար եւ կարգադրութիւն ընել նաշերու համար: Ուրիշ ամէն քան կայ:

Ձերդ ողջոյններով
Ռ. Ճեպեհեան

8 Փետրուար, 1990, Հալէպ

Ծանօթագրութիւններ

1. Նկատի ունի քիւրտ լրագրող-պատմաբան Մեմլեան Չադէ Ռիֆաթին, որի «Türkiye Inkilabinin iç yüzü» (Թրքական յեղափոխութեան մութ ծալքերը) գիրքը յոյս տեսաւ օսմաներէն 1929 թ. Հալէպում: Յետագայում այն թարգմանուեց եւ հրատարակուեց հայերէն: Գիրքը կիսայուշագրական բնոյթ ունի, որ բացայայտում եւ հայերի տեղահանութեան ու զանգուածային կոտորածների կազմակերպիչների՝ երիտօրքների նենգ ու դաւադիր ծրագրերը: Տուեալ ժամանակ Ռոպերտ Մեպեհեանը իր կողմից յայտնաբերուած նոր նիւթերի եւ նկարների հիման վրայ պատրաստած էր Մեմլեան Չադէ Ռիֆաթի գրքի հայերէն նոր հրատարակութիւնը:

2. Այս նամակը ստացել եւ իր ցանկութեամբ ուղարկել եմ մօտ 15 պատճենահանուած էջեր, ինստիտուտի գրադարանում պահուող Մեմլեան Չադէի գրքի օսմաներէն հրատարակութիւններից:

3. Այն դարակզբին հրատարակուող օսմաներէն թերթերից մէկի ամբողջական հաւաքածուն էր: Ուսումնասիրելիս նկատեցի, որ համարեա իրաքանչիւր համարում հրատարակուած էր թուրքական Մէջլիսի պատգամաւոր՝ Գրիգոր Ջոհրայի խորհրդարանական ճառերը, տարբեր հարցերի շուրջ:

4. 1991 թ. ամրանը երբ կրկին այցելութեան էր եկել Երեւան, մեր հանդիպման ընթացքում կրկին ակնարկելով այս մասին, Ռ. Մեպեհեանը մատնանշեց, որ ինքը պատրաստ է հոգալու իմ բոլոր ծախսերը: Յայտնեց նաեւ, որ իմ գրքի արաբերէն հրատարակութեան առթիւ, ինձ կը հրաւիրի Հալէպ:

ԳՐԱՆՕՍՈՒԹԻՒՆ

ՄԻՐԶԱ ԵՌՒՍՈՒՑ ՆԵՐՍԷՍՈՎ
ՃՇՄԱՐՏԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Թարգմանութիւնը բնագրից, Գեորգիանցի Երեմիայի և Գեորգիանցի Երեմիայի Գրքի ստիկեանի կոստիկեանի Երեմիայի, 2000, 360 էջ:

2000 թ. Դեկտեմբերին ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտ, գիտական խորհրդի որոշմամբ լոյս տեսաւ Միրզա Եոսուֆ Ներսէսովի (Յովսէփ Ներսիսեանց, 1798-1864) պարսկերէն շարադրուած երկը, որը որպէս անկողմնակալ պատմագիտական սկզբնաղբիւր կարեւոր նշանակութիւն ունի 18-19-րդ դարերի Ղարաբաղի պատմութեան ուսումնասիրութեան համար:

Աղբիւրագիտական յոյժ կարեւոր նշանակութիւն ունեցող այս երկի հայերէն եւ անգլերէն թարգմանութիւնը պարսկերէն բնագրից կատարել է Արեւելագիտութեան Ինստիտուտի երիտասարդ գիտնականներէջ Քրիստինէ Կոստիկեանը: Թարգմանութիւնը համալրուած է լիարժէք ներածականով, ծանօթագրութիւններով, ինչպէս նաեւ նրա կազմած հարկային, սոցիալական եւ այլ տերմինաբանական բառարանով:

Քրիստինէ Կոստիկեանի բազմաթիւ աղբիւրների վերլուծութեան հենքի վրայ շարադրուած ներածականից պարզուած է, որ Միրզա Եոսուֆ Ներսէսովի «Թարիխ-է Սաֆի» (ճշմարտացի պատմութիւն) միակ հեղինակային պարսկերէն ձեռագիրը պահպանուել է Վրաստանի Հանրապետութեան ԳԱ Կ. Կեկելիձէի անուան ձեռագրերի ինստիտուտի, Արեւելեան լեզուների բաժնում, 195 համարի տակ: Այն բաղկացած է առաջաբանից, 9-ը գլուխներից եւ

վերջաբանից: Հրատարակուած գրքում, որպէս պատմաբանական կարեւոր սկզբնաղբիւր ընդգրկուած են առաջաբանն ու 8-րդ եւ 9-րդ գլուխների հայերէն եւ անգլերէն թարգմանութիւնները: Վերջում տրուած է նաեւ պարսկերէն բնագրի պատճէն:

Թարգմանութեան ծանօթագրութիւններում Քրիստինէ Կոստիկեանը տուել է յարակից բացատրութիւններ եւ լրացումներ հայ եւ օտար աղբիւրներից, որոնք աղբիւրագիտական առումով խիստ կարեւոր նշանակութիւն ունեն եւ առաւել ամբողջացում են «Թարիխ-է Սաֆի» երկը:

Թէ ինչպիսի՞ դառը ճակատագիր է ունեցել պատանի Յովսէփը եւ ի՞նչ հանգամանքներում է յետադաժուում նախաձեռնել իր պատմական երկի շարադրանքը պարզաբանել է իր երկի համառօտ առաջաբանում: Ահա մի հատուած առաջաբանից.

«Այսպէս է առում որեւէ կողմնակալութիւնից ու իրականութեան աղաւաղումից գերծ այս գովելի պատմութեան հեղինակ, ձեր խոնարհ ծառայ Միրզա Եոսուֆ զարարադրիցին: Քանի որ նուստս մամուկ հասակում Ղարաբաղից տարուելով Ղարաբաղի երկիրը 18 տարի մնացի Ամիր Խան Սարդարի մօտ, կատարելապէս տիրապետեցի նրանց լեզուին: Որոշ ժամանակ լինելով Ամիր Խանի դիւանի գրագիրը եւ վարելով նրա նամակագրութիւնը, զբաղուում էի նաեւ «պատմութիւնների» եւ ուղեգրութիւնների ուսումնասիրութեամբ: Շփուելով ամէն տեսակ ցեղերի ու ժողովուրդների հետ՝ ծանօթացայ

նրանց հաւատալիքներին ու քարքարիկներին:

1828 թ. երբ Ռուսաստանի եւ Ղարաբաղի միջեւ կրկին հաշտութիւն է կնքուում, նուստս վերադառնում է իր հայրենի ծննդավայրը՝ Ղարաբաղ: Ռուսաստանի փառապանծ կայսր Նիկոլայ Պաւլովիչ Ա.-ի օրօք, որը մեծահոգաբար հաւատքի ու գաղափարների համար ունէ մէկի չէր նեղում ու անհանդուրժողականութիւն չէր ցուցաբերում, նուստս որոշ ժամանակ զբաղուեցի անտիկ շրջանի սրբերի վարքի ու տարրեր բնագաւառների նոր գրքերի ուսումնասիրութեամբ: Լիակատար պատկերացում կազմելով նրանց մասին, քանի որ պատմագրական գրքերում որոշ կողմնակալ ու կեղծ փաստերի համադրանքով, մի քանի ընկերներին խորհրդով ու առաջարկով որոշեցի մի իրական, ճշգրիտ ու ճշմարտացի պատմութիւն գրել, որ գերծ կը լինէր ստից ու անխորդ մկարագրութիւններից» (էջ 34):

Հրատարակուած 8 եւ 9-րդ գլուխներում հեղինակը մանրամասն տեղեկութիւններ է տուել Ղարաբաղի հայկական մելիքութիւնների, մահմեդական խանութեան եւ հանգամանալից կանգ է առել 19-րդ դարում տեղի ունեցած ռուս-պարսկական պատերազմների նկարագրութեան վրայ: Սահմանային ճշգրտումներ կատարելով, հաւաստի վկայութիւններ է տուել բնակչութեան կազմի մասին:

«Թարիխ-է Սաֆի»ի տուեալները

համեմատելով այլ աղբիւրների հետ, Քրիստինէ Կոստիկեանը իր ներածականում գալիս է այն եզրակացութեան, որ «ղարաբաղեան լեռնաշխարհը 19-րդ դարում ունեցել է 95 տոկոս հայ բնակչութիւն»: Յետագայում այդ թիւը քիչ թէ շատ ենթարկուել է փոփոխութեան, քանի որ խաները տեսապէս ձգտել են թռչուցնել զաղթեցնելով աւելացնել մահմեդական բնակչութեան թիւը:

Եզրակացնելով նշենք, որ աղբիւրագիտական բնոյթ ունեցող այս աշխատանքը կատարուած է գիտական բարձր մակարդակով: Այդ խօսում է այն մասին, որ Քրիստինէ Կոստիկեանը արժանի շարունակողն է իր գիտական աւարտաճառի ղեկավար նշանուոր պարսկագէտ, Մատենադարանի երկարամեայ աշխատող լուսահոգի Յակոբ Փափագեանի խիստ կարեւոր գործին:

Հարկ է նշել նաեւ, որ այս գրքի խմբագրութեան գործում իրենց նպաստն են ունեցել հայրենի պատմաբաններ՝ Ակադեմիկոս Մանուէլ Զուլալեանը, Իսկ Հրատարակութեան հովանաւորն է «Արմէն եւ Բերսարէ ձերեճեաններ ԱՄՆ» հիմնադրամի նախագահ Արսէն ձերեճեանը:

**ԽՕՍՔ ԲԱՐԻ ՄԱՂԹԱՆՔԻ ԼՈՍ
ԱՆՃԵԼԸՍՈՒՄ ՀՀ ԳԼԽԱՒՈՐ
ՀԻՒՊԱՏՈՍ ՊՐՆ.
ԱՐՄԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ
ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԻ
ԱՌԻԹՈՎ**

Մեծայարգ Պրն. Արմէն Մելքոնեան,
Անցած երեք տարիների ընթացքում դուք ամէն ջանք գործադրեցիք Հայաստանի Հանրապետութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների միջեւ դիւանագիտական կապերի զարգացման, ինչպէս նաեւ հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների սերտացմանն ու ամրապնդմանը:

Գոհունակութեամբ պիտի նշեմ, որ հակառակ Ձեր գերզբաղուածութեան միշտ պատրաստակամութիւն յայտնեցիք մասնակցելու Գալիֆորնիայի հայ համայնքի կուսակցութիւնների, միութիւնների եւ զանազան կազմակերպութիւնների հայանպաստ միջոցառումներին՝ պարգեւելով ներկաներին ազգային հպարտութեան խորը բերկրանք:

Իրականում, նման ձեռնարկներին Ձեր եւ հիւպատոսութեան անձնակազմի ներկայութիւնը, Եռադոյն դրօշի առկայութեամբ Հայաստանի օրհներգի կատարումը, մի կողմից մեղմացնում էր հայրենիքի հանդէպ մեր ունեցած խորը կարօտը, իսկ միւս կողմից հաւատք էր ներշնչում մեր իղձերի եւ բարի երազների իրականացմանը:

Մի խօսքով, որպէս Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս եւ որպէս աշխատանքային նախկին գործընկեր այսուհետ եւս բարեմաղթում եմ նորանոր յաջողութիւններ հայրենիքին ծառայելու վեհ եւ պատուաւոր գործում:

Յանձինս Ձեզ, Նոր Տարուայ նախաշեմին հայրենի երկրին բարեմաղթում եմ արեւշատութիւն եւ կապոյտ երկինք, մեր պետականութեան ամրապնդում եւ տնտեսութեան իսկական բարգաւաճում:


Թող որ անցնող դարի ծոցում մնան մեզ բոլորիս յուզմունք պատճառող անմիաբանութեան խորթ երեւոյթը, դժբախտութիւններն ու բոլոր դժուարութիւնները:

Տայ Աստուած, որ նոր հազարամեակի սկզբում արտագաղթի փոխարէն մեր շրթներում առաւելաբար հորովուի ներգաղթ հայաշունչ բառը, եւ մեկտեղուելով մայր հայրենիքում, միասնաբար նշենք քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեայ փառաւոր յորելեանը:

Բարին ընդ Ձեզ:

Փրոֆ. Աւետիս Փափազեան

**...ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՔՈ ԿՈՉՈՒՄՆ Է
ԱԻԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ
70-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**



Փրոֆ. Աւետիս Փափազեան

Հաճոյք է ողջունել բարեկամի մը, սրտակիցի մը ծննդեան տարեդարձը: աւելին, ողջունել տարեդարձը մարդու մը որ համակ նուիրում եւ իմացական երկունքի սպասարկու է, պարզապէս երջանկութիւն է: Փրոֆ. Աւետիս Փափազեանի ծննդեան 70-ամեակին առիթով անմիջական զգացումներու այս կարճ արտայայտութեան հետ, կը փափաքինք գրել հայոց պատմութեան այս մեծ սպասարկուին եւ երախտաւորին մասին:

Փրոֆ. Աւետիս Փափազեան օսամներէնի գիտակ աղբիւրագէտ պատմաբան է: Ան 32 տարի շարունակ աշխատած է ՀՀ Գիտութիւններու Ակադեմիայի Արեւելագիտութեան Հիմնարկին մէջ: 1988-1992 տարիներուն ղեկավարած է Հիմնարկի աղբիւրագիտական բաժինը: 1968-75 թուականներուն իր գիտահետազոտական աշխատանքին զուգընթաց Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան բաժնին մէջ դասաւանդած է Թուրքիոյ պատմութիւնն ու օսմաներէն՝ արաբատառ թուրքերէն լեզուն:

Մ. Նահանգներ հաստատուած Փրոֆ. Աւետիս Փափազեան կը շարունակէ իր պատմագիտական ուսումնասիրութիւններն ու հետազոտութիւնները, նոյն ատեն, հաւաստի ապացոյցներով հակազդելով թրքական ուրացումներուն մամուլով եւ հատորներով:

Մայիսի 1, 2001-ին Աւետիս Փափազեանի ընտանիքը ուրախութեամբ եւ հպարտութեամբ նշեց շնորհալի պատմաբանին ծննդեան 70-ամեակը եւ գիտական գործունէութեան 40-ամեակը: «Նոր Օր»ի խմբագրութիւնը կու գայ իր հրճուանքը միացնելու Փափազեան ընտանիքի ուրախութեան, մաղթելով իր սիրելի աշխատակիցին, բազմավաստակ պատմաբանին եւ ազնիւ այս հայուն երկար եւ քաջաւոր լինանք, արգասաբեր բազմաթիւ տարիներ եւ ստեղծագործական բեղուն շրջան մը:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆԻ «ԱՔՍՈՐՅԱԼԻ ԳՈՂԳՈԹԱՆ» ԳՐՔԻ ՄԱԿԻՆ

1915 թ. Մեծ եղեռնից հրաշքով ազատված վերապրողներին հուշագրությունները գրի առնելու և հրապարակելու գործում բավականին աշխատանք է կատարվել թե՛ հայրենի, թե՛ Սփյուռքի պատմաբանների կողմից: Այո՛, հետագա սերնդի համար կորստից փրկվեց Մեծ եղեռնի սահմուկեցուցիչ տեսարաններին և Տեր գործյան կիզիչ արևի տակ հայ ժողովրդի տառապանքներին ականատես վերապրողների հուշապատումները:

Այս բոլորը բարձր գնահատելով հանդերձ, հարկ ենք համարում նշել, որ տարբեր հանգամանքների բերումով շատ-շատերը չկարողացան թղթին հանձնել իրենց տառապանքի պատմության ողբիսականը:

Ահա, այս առումով գնահատելի գործ է կատարել Պէյլանի հայրենակցական միության ատենապետ Վահան Բահարյանը՝ հրատարակելով Մեծ եղեռնից հրաշքով ազատված կարապետ Բոյաջյանի հուշերը, որոնք ցնցող են ու սարսափելի:

«Մեր ընտանիքի 25 հոգուց միայն ես մնացի: Մի օր կուշտ, մի օր սոված անցկացնում էի օրերս և գիշերները մի ավերակ բաղնիքի մեջ էի քնում»:

Այո՛, համատարած աքսորի նպատակը հայ ազգի բնաջնջման քաղաքականությունն էր հետապնդում: Իզուր չէ, որ այդ ահավոր ողբերգության ականատես ֆրանսիացի պատմաբան՝ Ռենե Պիտոն գրել է.

«Հայերի տեղահանումը, կանանց, երեխաներին և ծերերին՝ միայն նենգորեն քողարկված մահվան դատապարտում էր: Տեղում կատարված կոտորածը ավելի մարդկային կլիներ: Այն կազատեր մարդկանց դաժան տանջանքներից»:

Այս բոլորից հետո ահա թե ինչպիսի երանելի ճակատագիր ունեցավ կարապետ Բոյաջյանը: Նա ոչ միայն փրկվում է այդ ահավոր սպանդից, այլև իր հարազատների կորստյան

վրեժխնդրությունը սրտում պահած միանում է հայ կամավորական շարժմանը, մասնակցում՝ Արարայի ճակատամարտին և անմահանում է դրա հաղթողների հետ միասին:

Վահան Բահարյանը «Նախաբան»ում և «Վերջաբան»ում ամփոփ կերպով բերել է իր խոհերն ու մտորումները Պէյլանի պատմության, ինչպես նաև Պէյլանի հայրենակցական միության գործունեության: Նա արժեքավորել և իմաստավորել է նաև Մեծ եղեռնին նվիրված մի շարք հուշարձաններ, ինչպես Երևանի Միծեռնակաբերդի, Տեր Զորի, և այլն, բերել բազմաթիվ նկարներ և քարտեսներ, որոնք կունենան դաստիարակչական կարևոր նշակություն այսօրվա և հետագա սերնդի համար:

«Հետեղեռնյա հուշապատում»ով նա ցույց է տալիս հայ ժողովրդի աննկուն պայքարի աշխուժացումը, հատկապես Մեծ եղեռնի 50-ամյակից սկսած, երբ Հայաստանում և Սփյուռքում սկսվում են կառուցվել Մեծ եղեռնին նվիրված բազմաթիվ հուշարձաններ և հայ ժողովուրդը ցեղասպանությունը դարձնում է օրվա հրատապ հարց, ճիգ չխնայելով, որպեսզի աշխարհի բոլոր պետութայնները ընդունեն այն:

Նա ընդլզումով է գրում Թուրքիայում հայերի անհավասար իրավունքների և այդ երևույթների նկատմամբ գերպետությունների անտարբերության մասին, որոնք իրենց քաղաքական և տնտեսական շահերը գերադասում են մարդկային իրավունքներից:

Հայրենակցական նվիրումով կատարված, խմբագրված, ծանոթագրված, շահեկան նյութերով համալրված այս արժեքավոր գիրքը, որը հեղինակը նվիրել է Մեծ եղեռնի 86-րդ տարեկիցին, պետք է օրինակ ծառայի բոլորիս, որպեսզի մեր վերապրող ծնողների (իհարկե, եթե նրանք կան) պատմածները, ինչպես նաև հիշողությունները գրի առնվեն և հրատարակվեն:

Պրոֆ. Ավետիս Փափազյան

ՄԱՐԳԻՍ ԵՎՓՈՒՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Մահուան քառասունօրին առիթով)

2001 թ. Յունուար 18-ին խորը վշտով հողին յանձնեցինք նորօք հան-
գուցեալ Սարգիս Եսփուճեանին, մի անձնաւորութիւն, մի հայ մանկավարժ
մտաւորականի, որի սիրտը տարիներ շարունակ մեծ նուիրումով բաբախել
էր հայ գիր ու գրականութեան զարգացման, իր ժողովրդի բարօրութեան
ու բարգաւաճման համար:

Սարգիս Եսփուճեանը իր աշխատասիրութեամբ, իր պարկեշտ եւ ազ-
նուագոյն բնաւորութեամբ կատարելապէս յարգուած մի անձնաւորութիւն
էր ոչ միայն իր հարազատների, այլեւ իր գրչակից ընկերների շրջապատում:

Իր մտաւոր զարգացմամբ, կեանքի երկարամեայ փորձով, իմաստուն էր
եւ հեռատես:

«Նոր Օր»ի խմբագրութիւնը Սարգիս Եսփուճեանին նուիրուած
մահախօսականում իրաւացիօրէն նշել էր, որ շաբաթաթերթում (Յունուար
6, 13) նրա ստորագրութեամբ հրատարակուած «Վերլիշումներ Ա. Իսա-
հակեանի - Դ. Դեմիրճեան մեծ մտերմութիւնից» խորագրով յօդուածը
հանդիսացաւ նրա կարապի երգը:

Այո՛, եւ ոչ միայն կարապի երգը:
Սարգիս Եսփուճեանը հաւանաբար զգացել էր, որ իր կեանքի արեւը
արդէն մօտենում է իր մայրամուտին, որովհետեւ վերոյիշեալ յօդուածը
վերջանում էր հետեւեալ խորհրդաւոր նախադասութեամբ.

«Դներն, սիրելի, քո մահուան մէջ ես իմ մահն եմ տեսնում...»:
Ճիշդ է, այս խօսքերը իր ժամանակին ասուած են եղել Աւետիք Իսա-
հակեանի կողմից, բայց ինձ մօտ այն տպաւորութիւնը ստեղծեց, որ Սարգիս
Եսփուճեանը այդ խօսքերով լուելեայն ինքն իրեն է նկատի ունեցել...:

Երբ հիւանդանոց իմ վերջին այցելութեան ժամանակ ցոյց տուցի «Նոր
Օր» թերթում լոյս տեսած իր յօդուածը, նա քմծիծաղ տուեց եւ լուեց.
Հիմա եմ ես հասկանում, որ այդ քմծիծաղի մէջ մեծ խորհուրդ կար...:

Որպէս հրապարակախօս-գրաբննադատ Սարգիս Եսփուճեանը դեռեւս
չատ գործեր ունէր կատարելու, որոնք ցաւօք մնացին անաւարտ:

Ես յանախակի լինում էի Սարգիս Եսփուճեանի եւ նրա հիւրասէր
տիկնոջ՝ Դամասկուհու յարկի տակ, եւ զրուցում մեր ժողովրդին յուզող
տարբեր հարցերի շուրջ:

Նա նպատակ ունէր մի երկրորդ նամակ գրել Յրանքֆորդում գտնուող
«Ընդդէմ Յեղասպանութեան Միութեան» նախագահ՝ Թուրք մտաւորական
Ալի Էրթեմին: Բայց չհասցրեց:

Յայտնի է, որ անցեալ տարուայ կէսերին Ալի Էրթեմին ուղղուած նրա
նամակն ու ստացուած թուրքերէն արդարամիտ պատասխանը շատ կարեւոր
ներդրում եղան Հայոց Յեղասպանութեան ճշմարտութեան բացայայտման
խնդրում:

Միրելի գրչակից մեծ եղբայր Սարգիս Եսփուճեան, քո պայծառ յիշա-
տակը միշտ վառ կը մնայ ոչ միայն քո հարազատների, այլեւ քո բոլոր
գրչակից ընկերների սրտերում:

Թող որ Աստծոյ լոյսը միշտ վառ մնայ քո շիրիմին:

ՆՈՐ ՕՐ • ԸՄԲԱԹ, ՄԱՐՏ 3, 2001

Փրոնֆ. Աւետիս Փափագեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Անգլիացի պատմաբան Հ. Է. Կիպլինգը հայոց ցեղասպանության մասին	1
2. Մարդիկ , որ պետք չէ մոռացվեն.....	8
3. Մի հատված Եոհաննես Լեփսիուսի դատական վկայությունից ..13	
4. Հայաստանը Սեվրի դաշնագրում	16
5. Կիլիկիայի Հայկական պետությունը 11-14-րդ դարերում, Ժամանակագրություն	20
6. Հայկական հարցը և Սեվրի դաշնագիրը	29
7. Մեծ Եղեռնի 86-րդ տարելիցը, ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ապրիլ - 2000 - Ապրիլ - 2001	33
8. Արևելագիտության ինստիտուտը միջազգային միություն անդամ	48
9. Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ժամանակագրություն	50
10. Ուղերձ Պրոֆ. Ավետիս Փափագյանի հատորների շնորհանդեսին	55
11. Մեծ հայրենասեր դուկտ. Ռոպերտ ձեպեմյանի մի նամակի հետքերով	57
12. Գրախոսություն, Միրզա Եուսուֆ Ներսեսով, ճշմարտացի պատմություն	60
13. Խոսք բարի մաղթանքի Լոս Անջելեսում ՀՀ գլխ. Հյուպատոս Պրն. Արմեն Մելքոնյանի պաշտոնավարության ավարտի առիթով	62
14. Գիտության աշխարհը քո կոչումն է _____	63
15. Սրտի խոսք վաստակաշատ գիտնական դուկտ Փրոֆ. Վահագն Մկրտչյանին _____	65
16. Երկու խոսք Վահան Բահարյանի «Աքսորյալի Գողգոթան» գրքի մասին _____	66
17. Սարգիս Եափուճեանի յիշատակին _____	68